ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը N 1083-Լ	*Տեսակը* Հիմնական
Տիպը Որոշում	*Կարգավիճակը* Գործում է
Սկզբնաղբյուրը Հրապարակվել է 30.06.2023	*Ընդունման վայրը* Երևան
Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը* 29.06.2023
Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը* 30.06.2023
Վավերացնող մարմինը	*Վավերացման ամսաթիվը*
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 01.07.2023	*Ուժը կորցնելու ամսաթիվը*

Կապեր այլ փաստաթղթերի հետ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2023-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հունիսի 2023 թվականի N 1083-Լ

ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2023-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 8-րդ մասը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման N 1 հավելվածի «Էկոնոմիկայի նախարարություն» բաժնի 9-րդ կետի 9.5-րդ ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել՝

1) Պարենային անվտանգության համակարգի զարգացման ռազմավարությունը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Պարենային անվտանգության համակարգի զարգացման ռազմավարության 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Հանձնարարել սույն որոշման N 2 հավելվածով նախատեսված միջոցառումների իրականացման համար պատասխանատու պետական մարմինների ղեկավարներին՝ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո կիսամյակային պարբերականությամբ, կիսամյակի ավարտին հաջորդող ամսվա մինչև 10-ը Հայաստանի Հանրապետության

էկոնոմիկայի նախարարություն ներկայացնել համապատասխան միջոցառումների իրականացման ընթացքի և արդյունքների մասին հաշվետվություն՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի կողմից հաստատված ձևաչափով:

3. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում հաստատել որոշման N 2 հավելվածի հաշվետվության ձևաչափը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ն. Փաշինյան**

Երևան

30.06.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2023 թվականի
հունիսի 29-ի N 1083-Լ որոշման

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2023 թվականի
հունիսի 29-ի N 1083-Լ որոշման

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2023 թվականի
հունիսի 29-ի N 1083-Լ որոշման

ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն

1 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՐՁԸ 1

2 ՆԱԽԱԲԱՆ 2

2.1 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ 2

2.2 ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԳԼՈԲԱԼ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 3

2.3 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ 4

3 ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 6

3.1 ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ 6

3.2 ՊԱՐԵՆԱՅԻՆ ԻՆՔՆԱԲԱՎՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ 10

3.3 ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ 11

3.4 ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՊԸ ՄՅՈՒՍ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԵՏ 11

3.5 ԱՅԼ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐ 12

4 ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԵՆԱՍՅՈՒՆԵՐ 14

4.1 ՊԱՐԵՆԻ (ՖԻԶԻԿԱԿԱՆ) ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆ 14

4.2 ՊԱՐԵՆԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ 17

4.3 ՊԱՐԵՆԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ 18

4.4 ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ 19

5 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ 21

5.1 ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ԵՆԹԱՆՊԱՏԱԿՆԵՐ 24

5.1.1 Նպատակներից բխող ենթանպատակներ 25

6 ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ 28

7 ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐԸ 29

8 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ 31

9 ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ 32

Հապավումներ

ԱՆ	Առողջապահության նախարարություն
ՊԳԿ	ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն
ՊՀԳ	Պարենի համաշխարհային գագաթնաժողով
ՊՀԾ	Պարենի համաշխարհային ծրագիր
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
COVID-19	Նոր կորոնավիրուս, 2019 թ.
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք

1 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՐՁԸ

1. Բնակչության պարենային անվտանգության կարիքների բավարարումը, այդ թվում՝ արտակարգ իրավիճակների և ռազմական դրության ժամանակ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջնահերթություններից է: Պարենային անվտանգության ապահովումը ենթադրում է, որ ժամանակի ցանկացած պահի բնակչությանը ֆիզիկապես և տնտեսապես հասանելի է բավարար, անվտանգ և սննդարար սննդամթերք, որը բավարարում է բնակչության կարիքներին և սննդի պահանջներին՝ առողջ և ակտիվ կյանք ունենալու համար[1]: Պարենային անվտանգությունը ոչ միայն հիմնարար իրավունք է բնակչության համար, այլ նաև մարդկային կապիտալի և հմտությունների իրացման կարևոր նախապայման: Բացի այդ, պարենային անվտանգությունը տնային տնտեսությունների տնտեսական ցուցանիշները տարածաշրջանային և ազգային մակարդակներում բարելավելու նախադրյալ է հանդիսանում:

2. Պարենային անվտանգության մակարդակի բարձրացումը թույլ կտա արձագանքել տարատեսակ բնական, տեխնածին, քաղաքական, անվտանգային և այլ ճգնաժամերին ու մեղմել դրանց հետևանքները՝ նպաստելով երկրի սոցիալական, տնտեսական և մարդկային ռեսուրսների զարգացմանը:

Համաձայն պարենային անվտանգության միջազգային ընդունված սկզբունքների, որոնց հավատարիմ է Հայաստանի Հանրապետությունը (SDG 2-ի ներքո)՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը մինչև 2030 թ. կոնկրետ գործողություններ է ձեռնարկելու «Սովին վերջ դնելու, պարենային անվտանգության և բարելավված սննդի ապահովման և կայուն գյուղատնտեսության խթանման համար»:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը նաև վերահաստատել է իր հավատարմությունը 1996 թվականի Պարենի համաշխարհային գագաթնաժողովում ընդունված «Պարենի համաշխարհային անվտանգության մասին Հռոմի հռչակագրին» (ՄԱԿ, 1996), որը ճանաչում է. «Առողջ և սննդարար սննդամթերքից օգտվելու յուրաքանչյուրի իրավունքը՝ սովից զերծ մնալու հիմնարար իրավունքին համապատասխան»:

3. Այդ նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրում ներառվել է «Պարենային անվտանգության համակարգի զարգացման ռազմավարության և 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի մշակում» միջոցառումը՝ ներկայացնելով նոր մոտեցում պարենային անվտանգության խնդիրներին:

[1] Տե՛ս World Food Summit, 1996 թ.

2 ՆԱԽԱԲԱՆ

2.1 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

4. **Հայաստանի Հանրապետությունն ակտիվ քայլեր է իրականացնում 2020 թվականի ճգնաժամի հետևանքներից վերականգնվելու ուղղությամբ**: Հայաստանի Հանրապետության ՀՆԱ-ն 2018 թվականին աճել է 5"2%-ի, 2019 թվականին՝ 7.6%-ի սահմաններում, սակայն COVID-19 համավարակով, համաշխարհային տնտեսական անկումով և 44-օրյա պատերազմով պայմանավորված աճն ընդհատվել է, և ՀՆԱ-ն 2020 թվականին նվազել է 7.2%-ով: Այս բարդությունների ֆոնին տնտեսությունը վերականգնվել է 2021 թվականին. ՀՆԱ-ի տարեկան աճը կազմել է 5.7%[2], իսկ վերականգնմանը մասնակցել են տնտեսության գրեթե բոլոր ոլորտերը: Աճել են նաև տնտեսական բարեկեցության այլ ցուցանիշներ, ինչպիսիք են բնակչության զբաղվածությունը և եկամուտները: Իրավիճակը կրկին փոփոխվել է 2022 թվականին՝ տարածաշրջանային և գլոբալ մակարդակում տեղի ունեցող քաղաքական և առևտրային ցնցումների, համաշխարհային մատակարարման շղթաների խափանումների, էներգակիրների, պարենային ու գյուղատնտեսական ապրանքների գների աճի, ինչպես նաև այլ համաշխարհային տնտեսական ցնցումների, ինչպես նաև սեպտեմբեր ամսին Ադրբեջանի կողմից Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքի նկատմամբ սանձազերծված ագրեսիայի հետևանքով:

5. 2022 թվականի հուլիսի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում առկա է 28719 տեղահանված բնակիչ: Գործազուրկ է տեղական պոտենցիալ աշխատուժի 15%-ը, որին գումարվելով պատերազմի հետևանքով տեղահանված բնակչության զգալի հատվածը, գործազուրկների մասնաբաժինը զգալիորեն ավելացել է: 2022 թվականի առաջին և երկրորդ եռամսյակներում գործազրկության մակարդակը նախորդ տարվա նույն եռամսյակների նկատմամբ նվազել է համապատասխանաբար՝ 1.9 տոկոսային կետով (կազմելով 14,8%) և 1.5 տոկոսային կետով (կազմելով 13.0%), գործազուրկների թիվը նվազել է համապատասխանաբար՝ 11.3%-ով և 11.2%-ով, իսկ զբաղվածների թիվն աճել է համապատասխանաբար՝ 3.2%-ով և 1.0%-ով:[3]

6. Չնայած 2022 թվականին արձանագրված նոր համաշխարհային տնտեսական ցնցումներին՝ **Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր մակրոտնտեսական իրավիճակը բարենպաստ է, և առկա են աճի նախադրյալներ,** որոնք շարունակում են խոցելի մնալ հնարավոր նոր ցնցումներին հանդիման: Այդ պատճառով հատուկ կարևորություն է ստանում բոլոր ոլորտների դիմակայության ամրապնդումը՝ ներառյալ պարենային անվտանգությունը և մարդկային զարգացումը, որոնք երկրում կայուն զարգացման և աճի կարևոր նախադրյալներն են հանդիսանում:

[2] ԱՎԾ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը», 2018-2021թթ" հրապարակումները

[3] ԱՎԾ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը», 2018-2021թթ" «Զբաղվածություն» բաժնի հրապարակումները

2.2 ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԳԼՈԲԱԼ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

7. 1974 թվականին ՊՀԳ-ում առաջին անգամ ներդրվել է «Պարենային անվտանգություն» տերմինը, ինչը սահմանվել է որպես. «*Շուկաներում պարենային ապրանքների **կայունության և առկայության պահպանում**՝ աշխարհի բոլոր երկրների համար*»: Զարգացման ներկա փուլում պարենային անվտանգության ընկալումը զգալիորեն ընդլայնվել է: Այսպիսով՝ 1996 թվականին ՊՀԳ-ում պարենային անվտանգությունը սահմանել են նոր՝ ընդլայնված ձևակերպմամբ. *«Պարենային անվտանգությունը իրավական, կազմակերպական, նյութատեխնիկական և այլ բնույթի միջոցառումների համալիր է, որն ուղղված է անհրաժեշտ որակի և բավարար քանակով, առողջության համար անվտանգ, հասարակության սոցիալ-մշակութային և պատմական առանձնահատկությունների տեսանկյունից ընդունելի, **լիարժեք պարենով ապահովմանը**, որը հասանելի է հասարակության յուրաքանչյուր անդամի և կարող է սպառվել նրա կողմից ցանկացած պահի և ցանկացած իրավիճակում (այդ թվում՝ արտակարգ իրավիճակների և ռազմական դրության ժամանակ)՝ առողջ և բարեկեցիկ կյանք վարելու համար»*:

8. Միջազգային պրակտիկայում երկրների պարենային անվտանգության դիրքը գնահատվում է պարենային անվտանգության գլոբալ ինդեքսով, որը բաղկացած է 4 բաղադրիչներից՝ պարենամթերքի մատչելիություն, հասանելիություն, որակ և անվտանգություն, բնական ռեսուրսներ և ճկունություն, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին ձևավորվում է մի քանի գործոններով: 2020 թվականին էկոնոմիկայի նախարարության կողմից կատարվել է Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության գլոբալ ինդեքսի հաշվարկ, որի արդյունքներով այն կազմել է 59.4, այդ թվում՝ պարենամթերքի մատչելիության մասով՝ 64.9, հասանելիության մասով՝ 55.4, որակի և անվտանգության մասով՝ 65.1 ու բնական ռեսուրսների և ճկունության մասով՝ 51.2:

9. 2021 թվականին տեղի է ունեցել պարենային համակարգերի առաջին գագաթնաժողովը, որը նպատակ է ունեցել մասնակից երկրների միջև ազգային և գլոբալ պարենային համակարգերը բարելավելու ուղղությամբ երկխոսության հիմքեր դնել: Հայաստանի Հանրապետության կառավարությունը մասնակից է եղել այդ երկխոսությանը և նախապես ակտիվ քննարկումներ է անցկացրել ազգային մակարդակում՝ ներգրավելով բազմաթիվ շահագրգիռ կառույցների:

10. Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության համակարգի զարգացման ռազմավարության իրագործումը մեծապես հիմնվում է ՊՀԳ-ում սահմանված մարտահրավերների հաղթահարման և նպատակների իրականացման անհրաժեշ-

տության վրա: Միաժամանակ, ռազմավարության մեջ առաջարկվող գործողություններն ու միջոցառումները հաշվի են առնում ՊՀԳ-ի այն մոտեցումները, որոնց մշակմանը (2021 թվականին) Հայաստանի Հանրապետությունն իր ակտիվ մասնակցությունն է ցուցաբերել:

11. ՊՀԳ-ում նախանշվել են գլոբալ պարենային անվտանգությանը միտված հետևյալ դրույթները.

Դրույթ 1-ին - Ապահովել անվտանգ և սննդարար սննդի հասանելիություն բոլորի համար:

Դրույթ 2-րդ - Անցում կատարել կայուն սպառման մոտեցումների:

Դրույթ 3-րդ - Խթանել բնության և կենսաբազմազանության պահպանության ու պաշտպանության տեսանկյունից անվտանգ մթերքների արտադրությունը:

Դրույթ 4-րդ – Ապահովել արդար և արժանապատիվ ապրելակերպ:

Դրույթ 5-րդ – Ապահովել խոցելիության, ցնցումների և աղետների նկատմամբ դիմակայունություն:

Սույն ռազմավարությամբ նախանշվող նպատակներն ուղղված են վերոնշյալ գործողությունների իրականացմանը: Բացի այդ՝ պետք է նշել, որ վերջին տարիներին տեղի ունեցած զարգացումները ցույց տվեցին, որ Հայաստանի Հանրապետությունն ընդհանուր առմամբ պատրաստ չէր ո՛չ COVID-19 համավարակի և ո՛չ էլ պատերազմական իրավիճակներում ի հայտ եկած մարտահրավերներին: Դրանց թվում են նաև պարենի մատակարարման համակարգերի աշխատանքի խափանումները: Վերջիններս սաստկացել էին կոնկրետ տարածքների և հաղորդակցության ուղիների կորուստների արդյունքում: Հաշվի առնելով այս հանգամանքը և հիմնվելով մասնագիտական շահագրգիռ կողմերի հետ անցկացված քննարկումների արդյունքների վրա՝ սույն ռազմավարության շրջանակներում մշակվել է ևս մեկ դրույթ:

Դրույթ 6-րդ - Արտակարգ իրավիճակներին արձագանքման համակարգի մշակում, որը միտված է արտակարգ իրավիճակներում արագ արձագանքման համակարգի ստեղծմանը և թույլ կտա առավելագույնս պատշաճ (արագ, հասցեական, արդյունավետորեն) արձագանքել պարենի ապահովման մասով առաջացող խնդիրներին:

2.3 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

12. **Պարենային անվտանգության ռազմավարության ընդունման հիմնական նպատակն է ապահովել բնակչության բոլոր խմբերի համար առողջապահական նորմերին համապատասխանող պարենի ֆիզիկական և տնտեսական մատչելիությունը, ինչպես նաև նախադրյալներ ստեղծել դիմակայելու ներքին և արտաքին շուկայի անբարենպաստ փոփոխություններին և հնարավոր արտակարգ իրավիճակների բացասական հետևանքներին:**

13. Պարենային անվտանգության ռազմավարության ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալ գործոններով՝
   1) պարենային անվտանգության հիմնախնդրի կարգավորման միասնական, արդյունավետ և հիմնավորված քաղաքականության իրականացման անհրաժեշտություն.
   2) տարածաշրջանային (այդ թվում՝ զինված) հակամարտությունների առկայության, երկրի հաղորդակցության ուղիների խոցելիության, հարկադիր միգրանտների հոսքերի առկայության, պարենի ինքնաբավության ցածր մակարդակի պայմաններում պարենային անվտանգության արդյունավետ կառավարման համակարգերի և կոնկրետ մեխանիզմների ներդրման անհրաժեշտություն: Բացի այդ, ռազմական դրության և արտակարգ իրավիճակներում պարենի անխափան մատակարարման ապահովման և համապատասխան պահուստային պաշարների ձևավորման գործընթացի կանոնակարգման անհրաժեշտություն.
   3) կորոնավիրուսի կամ հնարավոր այլ համավարակների պայմաններում պարենային անվտանգության ի հայտ եկած խնդիրներ և դրանց արդյունավետ լուծման անհրաժեշտություն.
   4) ներքին շուկայում ինքնաբավության ցածր մակարդակ ունեցող պարենային հիմնական ապրանքների՝ պարենային ցորենի, բուսական յուղի, հատիկաընդեղենի, շաքարի և առանձին հումքատեսակների պահանջարկի բավարարման աղբյուրների հստակեցման, տեղական արտադրության խթանման և ներմուծման կանոնակարգման անհրաժեշտություն.
   5) բնակչության աղքատության հաղթահարմանն ուղղված հետևողական քաղաքականության իրականացման անհրաժեշտություն.
   6) նյութական պահուստի ապրանքների տեսականու ընդլայնման և ծավալների ավելացման անհրաժեշտություն:

3 ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

3.1 ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ

14. Հայաստանի Հանրապետությունը դեպի ծով ելք չունեցող և տարածաշրջանային հակամարտությունների պատճառով արտաքին հաղորդակցության ուղիների սահմանափակումներ ունեցող երկիր է: Սա զգալիորեն բարդացնում է տնտեսական առավելություն ունեցող (նաև պարենային) **արտադրանքի արտահանման և ներքին շուկայում մեծ պահանջարկ ունեցող մթերքների ներկրման հնարավորությունները**:

15. **Պարենային անապահովությունը Հայաստանի Հանրապետությունում բարձր է**. բնակչության կեսից ավելին պարենային անապահովության վտանգի տակ է: ՊՀԾ-ի կողմից կատարված վերջին «Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության և խոցելիության» գնահատումն արձանագրում է, որ հետազոտված տնային տնտեսությունների 23%-ը պարենային անապահով վիճակում է, իսկ 56%-ը պարենային ապահովվածության սահմանային շեմին է գտնվում[4]: Սա վկայում է այն մասին, որ Հայաստանի Հանրապետության բնակչության մեծամասնությունը ճգնաժամային կամ շոկային իրավիճակների դեպքում պարենի տեսանկյունից անապահով դառնալու վտանգի տակ է:

16. **Հնարավոր պարենային ճգնաժամերի և արտակարգ իրավիճակների կանխատեսման, կանխարգելման և դրանց արագ արձագանքման ենթակառուցվածքներն ու կարողությունները խիստ անբավարար են Հայաստանի Հանրապետությունում**: Ներկա պահին պարենային անվտանգության իրավիճակի կանխատեսման և հնարավոր ռիսկերի վաղաժամ կանխարգելման որևէ համապարփակ համակարգ երկրում չի գործում: Համապատասխան գերատեսչություններն ու կառույցները ճգնաժամային իրավիճակներին որպես կանոն արձագանքում են դրանց առերևույթ ի հայտ գալուց որոշ ժամանակ հետո: Այդ ռիսկերը բազմաթիվ են և փոխկապակցված, մասնավորապես՝
    1) պատերազմական իրավիճակը.
    2) համաճարակների ու համավարակների բռնկումները.
    3) Վերին Լարսի սահմանային կետի աշխատանքի խաթարումները.
    4) տարածաշրջանում և աշխարհում տեղի ունեցող ռազմաքաղաքական իրադարձությունները, ինչպես նաև վերջիններիս արդյունքում առաջացող հարկադիր միգրանտների հոսքերը, առանձին երկրների նկատմամբ կիրառվող պատժամիջոցները և այլն.

[4] Աղբյուրը՝ ՊՀԾ, «Հայաստանում պարենային ապահովության և խոցելիության գնահատում, մայիս հունիս 2022թ.»

5) պարենային (և ոչ միայն) ապրանքների գների կտրուկ աճը, մատակարարումների խաթարումները, ֆինանսական համակարգերի գործունեության խաթարումները և այդ ամենի ազդեցությունը Հայաստանի Հանրապետությունում պարենային և հարակից ապրանքների առկայության և մատչելիության վրա.
6) արժութային տատանումների ազդեցությունը Հայաստանի Հանրապետությունում պարենային և հարակից ապրանքների առկայության և մատչելիության վրա, ինչպես նաև դրա պատճառով արձանագրված արտահանման դժվարությունների կրճատումը.
7) համաշխարհային շուկայում կոնկրետ ապրանքների արտադրության ծավալների կտրուկ աճը կամ անկումը, դրանից բխող հետևանքները և բազմաթիվ այլ գործոններ:

17. Վերջին տարիներին տեղի ունեցող իրադարձությունները բավարար ազդակ են պարենային անվտանգության ռիսկերի կանխատեսման և կանխարգելման, ինչպես նաև արագ արձագանքման արդյունավետ համակարգերի ներդրման համար:

18. **Աղքատությունը պարենային անապահովության հիմնական որոշիչ գործոններից մեկն է**: 2020 թվականին Հայաստանի Հանրապետությունում աղքատության մակարդակը՝ ըստ աղքատության միջին գծի կազմել է 27%: Աղքատ բնակչության շրջանում պարենային անապահովությունից հատկապես տուժել են գյուղական և հեռավոր վայրերում ապրող, ցածր եկամուտ ունեցող ընտանիքները:

19. **2022 թվականի հունիսի դրությամբ երկրում արձանագրվել է 23.2% պարենային անապահովության մակարդակ, և այդ առումով Հայաստանի Հանրապետության հյուսիսային շրջանները, գյուղատնտեսության ռիսկերով, Տավուշում հողերի մեծ կտորների մշակման անհնարինության, ոռոգման կատարյալ անարդյունավետության և այլ գործոններով պայմանավորված ավելի խոցելի են. մասնավորապես՝ պարենային անապահովությունը Տավուշի մարզում կազմել է 25%, Լոռու մարզում՝ 31%, Շիրակի մարզում՝ 35%:**

20. **Սննդամթերքի կորուստները լուրջ խնդիր են դարձել Հայաստանի Հանրապետությունում:** 2018 թվականի տվյալներով միայն բանջարեղենի որոշ տեսակների մասով կորուստների գումարը (մանրածախ գներով հաշվարկված) կազմել է շուրջ 37 միլիարդ Հայաստանի Հանրապետության դրամ: Հատկանշական է, որ այս գումարը զգալիորեն գերազանցել է բանջարեղենի ներմուծման ծավալը նույն ժամանակահատվածում: Բացի այդ, մասնագետների գնահատմամբ՝ կորուստների զգալի մասը պայմանավորված է տնային տնտեսություններում մթերքի օգտագործման ավանդական մշակույթով, ներքին շուկայի և տեղական արտադրության կազմակերպման ցածր մակարդակով, ինչպես նաև հասարակական սննդամթերքի բնագավառում սննդամթերքի ավելցուկի և մնացորդների անկայուն օգտագործմամբ:

Աղյուսակ 1 - Բանջարեղենի հիմնական տեսակների հետբերքահավաքային և սպառման փուլերի հիմնական կորուստները Հայաստանի Հանրապետությունում և այլ երկրներում[5]

ԱԱՏԳ	Ապրանք	Հայաստան	Բելառուս	Հունգարիա	Իսրայել	Իտալիա	Ռումինիա	Իսպանիա	Թուրքիա
070310	Սոխ	31%	5.5%	3.3%	5.4%	11.1%	1.0%	15.2%	14.3%
070200	Լոլիկ	5%	7.5%	1.0%	1.9%	9.4%	2.3%	8.5%	15.6%
070610	Գազար	9.2%	տ/չ	տ/չ	տ/չ	տ/չ	տ/չ	տ/չ	տ/չ
070190	Կարտոֆիլ	8.5%	7.1%	3.1%	7.7%	2.0%	14.5%	4.9%	12.8%
070490	Կաղամբ	26.5%	տ/չ	տ/չ	տ/չ	տ/չ	տ/չ	տ/չ	տ/չ
070700	Վարունգ	9.1%	տ/չ	տ/չ	տ/չ	տ/չ	տ/չ	տ/չ	տ/չ

21. **Տնային տնտեսությունների սննդակարգը մեծապես կազմված է բարձր կալորիականությամբ մի քանի մթերքներից**, մասնավորապես՝ հացից և կարտոֆիլից, և կա հստակ կապ աղքատության մակարդակի և օրական կալորիականության ընդունման ու սնուցման մակարդակների միջև: 2021 թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետության տնային տնտեսությունների ավելի քան 17.1%-ը երկաթով հարուստ սնունդ չի օգտագործում[6]: Նրանց միայն 45.1%-ն է (6-23 ամսական երեխաների մասնաբաժինը), որ ստանում է նվազագույն ընդունելի սննդակարգ: Երկաթով հարուստ սնունդ չստացողների մասնաբաժինը 15.0%-ային կետով աճել է 2020 թվականի ամառվա համեմատ, ինչն անհանգստացնող, բարձր ցուցանիշ է: Վերջինս համեմատաբար բարձր է 18-23 ամսական երեխաների շրջանում (53.0%), մինչդեռ 6-17 ամսական երեխաների դեպքում միայն 42-44%-ն է ստանում նվազագույն ընդունելի սննդակարգ:

22. 2008-2019 թվականներն ընկած ժամանակահատվածում արձանագրվել են սննդի սպառման փոփոխությունները, և էներգիայի ու մակրոսննդանյութերի ընդունումը նվազել է: Մինչդեռ սննդամթերքի յուրաքանչյուր խմբի մասնաբաժինն ընդհանուր էներգիայի և սննդանյութերի ընդունման մեջ չի փոխվել: Ընդհանուր էներգիայի, սպիտակուցների և ածխաջրերի ընդունման ավելի քան 50%-ը ստացվում է հացահատիկային և ալրային հենքով մթերքների սպառումից: Բնակչության կողմից

[5] Աղբյուրը՝ «Potential Impact of COVID-19 on the Imported Food Supply Chains of Armenia: Rapid Study, AM Partners, 2020»

[6] Աղբյուրը՝ ՊՀԾ, "Food Security and Vulnerability Assessment in Armenia Round 3, December 2021", հաղումը՝ https://docs.wfp.org/api/documents/WFP-0000134964/download/?_ga=2.91748882.987812115.1665335296-1744875093.1622788255

ընդհանուր էներգիայի և ածխաջրերի ընդունումը ԱՀԿ/ՊԳԿ ուղեցույցներով սահմանված նորմերից ցածր է[7]:

23. **Ոչ գրագետ սննդակարգն ակնհայտորեն հանգեցնում է նաև գիրության, նաև այլ հիվանդությունների մակարդակի աճին:** Գիրության մակարդակը մեծահասակների համար կազմում է ավելի քան 20%, իսկ մինչև 5 տարեկան երեխաների 10%-ն ունի ավելորդ քաշ: Հայաստանի Հանրապետությունում գիրության տարածվածությունը գերազանցում է տարածաշրջանային միջինը՝ 10.3% կանանց և 7.5% տղամարդկանց մոտ: Վատ սննդակարգը նաև շաքարախտի հետ պատճառահետևանքային կապ ունի: Գնահատվում է, որ շաքարախտը տարածված է չափահաս կանանց 14.0%-ի և չափահաս տղամարդկանց 13.1%-ի շրջանում[8]:

24. Հայաստանն իր ամբողջ տարածքով և խոցելի էկոհամակարգերով համարվում է կլիմայի փոփոխության նկատմամբ առավել զգայուն երկիր: Հայաստանի Հանրապետության բնակավայրերի շուրջ 35%-ն ունի կլիմայի փոփոխության նկատմամբ դիմակայունության բարձր աստիճան, իսկ բաշխվածության միջին և ցածր դիմակայունությունը կազմում է համապատասխանաբար 20% և 14%: Համաձայն կանխատեսումների՝ մինչև 2030 թվականը գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը կնվազի 8-14%-ով, կկրճատվի Հայաստանի արոտավայրերի ընդհանուր մակերեսը. ենթալպյան և ալպյան գոտու արոտավայրերի տարածքները կկրճատվեն 19-22%-ով, իսկ դրանցից ստացվող բերքի ծավալը կնվազի 4-10%-ով:[9]

25. **Պարենային անապահովությունը սերտորեն կապված է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության և սննդամթերքի արդյունաբերության զարգացման մակարդակի հետ**, որը գյուղական բնակավայրերի տնտեսական գործունեության հիմնական ձևն է: Ֆիզիկական անձի կարգավիճակ ունեցող գյուղացիական տնտեսություններն արտադրում են գյուղատնտեսական արտադրանքի ավելի քան 97%-ը, սակայն նրանց ապահոված արտադրողականության ցուցանիշները զգալիորեն ցածր են: Մշակվում է հանրապետության գյուղատնտեսական նշանակության վարելահողերի շուրջ 50%-ը, իսկ հանրապետության ջրային ռեսուրսների ոչ արդյունավետ և համակարգված կառավարումը գյուղատնտեսությամբ զբաղվելը դարձնում է ոչ գրավիչ: Արժեշղթաները թերի են և թույլ զարգացած, պարենային անվտանգության մակարդակի և պարենային ապրանքների որակի ու անվտանգության ստանդարտներ, մասնավորապես՝ «GlobalGap» ստանդարտը, ներդրված չեն, և այդ հանգամանքը եվրոպական շուկաներ ապրանքների արտահանման հիմնական խոչընդոտներից է:

---

[7] Աղբյուրը՝ https://www.mdpi.com/2304-8158/11/18/2847/html

[8] Աղբյուրը՝ https://docs.wfp.org/api/documents/WFP-0000139868/download/, 2021

[9] «Կլիմայի փոփոխության ազդեցությունը ՀՀ-ում բնակչության բարեկեցության և պարենային ապահովության վրա» WFP կողմից իրականացված հետազոտություն

3.2 ՊԱՐԵՆԱՅԻՆ ԻՆՔՆԱԲԱՎՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ

26. Հայաստանի Հանրապետության պարենային հաշվեկշռի վերլուծությունը ցույց է տալիս, որ **պարենի բազմաթիվ տեսակների մասով Հայաստանի Հանրապետության ինքնաբավության մակարդակն անբավարար է:**

27. Ստորև ներկայացվում են 2017-2021 թվականների Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի տվյալներով Հայաստանի Հանրապետության առաջին անհրաժեշտության պարենամթերքի ինքնաբավության մակարդակները:

Աղյուսակ 2 - Առաջին անհրաժեշտության պարենամթերքների ինքնաբավության մակարդակը, %

Առաջին անհրաժեշտության պարենամթերքները	Տարիները				
	2017 թ.	2018 թ.	2019 թ.	2020 թ.	2021 թ.
Ցորեն	33.2	31.5	25.9	24.4	23.2
Կարտոֆիլ	102.6	102.6	101.1	101.1	111.7
Բանջարեղեն	102.5	104.7	102.4	103.9	105.6
Միրգ և հատապտուղ	109.7	108.9	104.0	98.2	114.4
Հատիկաընդեղեն	49.7	38.6	38.2	37.3	37.3
Բուսական յուղ	4.3	2.2	1.5	0.9	0.6
Շաքար	65.2	68.6	73.0	38.0	33.9
Ձու	98.2	99.5	100	100.3	98.8
Կաթ	91.2	86.8	84.3	82.0	87.7
Տավարի միս	91.5	89.2	90.4	87.3	92.2
Խոզի միս	58.0	53.3	55.5	45.1	53.2
Ոչխարի և այծի միս	138.9	128.6	113.8	100.4	100.4
Թռչնի միս	22.5	26.6	21.7	23.9	26.7
Խաղող	106.4	104.8	103.6	108.0	106.7
Ձուկ	101.8	109.0	113.1	148.4	143.7

28. Ինչպես փաստում են տվյալները, Հայաստանի Հանրապետությունում ինքնաբավության բարձր մակարդակ է արձանագրվել կարտոֆիլի, բանջարաբոստանային մշակաբույսերի, պտղի, խաղողի, ոչխարի և այծի մսի, ձվի, ձկան ուղղությամբ: Միջինից բարձր ինքնաբավության մակարդակ է ապահովվում տավարի և խոզի մսի, կաթի համար: Անհանգստացնող է հատկապես կենսական կարևոր նշանակություն ունեցող սննդատեսակների գծով ինքնաբավության ցածր մակարդակը. ցորենի, հատիկաընդեղեն մշակաբույսերի, բուսական յուղի, թռչնի մսի, շաքարի, որոնց ինքնաբավության մակարդակը շարունակում է մնալ ծայրահեղ ցածր: Անհրաժեշտ է միջոցառումներ ձեռնարկել ինքնաբավության ցածր մակարդակ ունեցող այն ապրանքների արտադրության ծավալների ավելացման ուղղությամբ,

որոնց մասով հնարավորություններն առկա են: Դրանցից են, մասնավորապես՝ ցորենը, հատիկաընդեղենը մշակաբույսերը, թռչնի և խոզի միսը:

3.3 ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

29. 2020 թվականի սկզբից ի վեր Հայաստանի Հանրապետության առջև ծառացել են բազմաթիվ և տարաբնույթ մարտահրավերներ, պարբերաբար ի հայտ են գալիս արտակարգ և շոկային իրավիճակներ և դրանցից բխող անհապաղ լուծումներ պահանջող խնդիրներ, որոնց արագ արձագանքելու և լուծումներ առաջադրելու համար ներկայիս մոդելը լիարժեք չի գործում: Գործող համակարգի անարդյունավետությունը պայմանավորված է համակարգող մարմնի գործառույթների շրջանակի հստակության բացակայությամբ, մոնիթորինգի և վերահսկողության համակարգի բացակայությամբ, արտակարգ և շոկային իրավիճակների գնահատման և առաջարկությունների մշակման մասնագիտական ներուժի և կարողությունների ցածր մակարդակով, ռիսկերի կանխարգելման համար անհրաժեշտ պահուստների անբավարար մակարդակով, ֆինանսական ռեսուրսների հատկացման և այլ գործոններով պայմանավորված:

3.4 ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՊԸ ՄՅՈՒՍ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԵՏ

30. Պարենային անվտանգության ապահովումը հանդիսանում է երկրի կարևորագույն մարտահրավերներից մեկը՝ հատկապես ներկա քաղաքական և սոցիալ-տնտեսական անկայուն պայմաններում: Միաժամանակ, պարենային անվտանգությունը մեկուսի խնդիր չէ, այն համակարգային է և արդի սահմանմամբ ընդգրկում է երկրի կենսագործունեության գրեթե բոլոր ուղղությունները՝ գյուղատնտեսությունից մինչև առողջապահություն, կրթություն, բնապահպանություն և այլն: Այդ առումով շատ կարևոր է ընդգծել, որ սույն ռազմավարությունը և դրա իրականացումը համահունչ են լինելու բոլոր մյուս ոլորտների ռազմավարություններին՝ ապահովվելու կապն ու փոխլրացումը տարբեր բնագավառների միջև: Պարենային անվտանգության համակարգի բարելավմանն ուղղված գործող ռազմավարություններից և ծրագրերից են մասնավորապես՝
    1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների ծրագիրը.
    2) Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարությունը.
    3) Կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային գործողությունների ծրագիրը և 2021-2025 թվականների միջոցառումները.
    4) Երեխաների սնուցման հայեցակարգը (2014 թվական).

5) Հայաստանի 2020-2050 թվականների վերափոխման ռազմավարությունը.
6) Աղետների ռիսկի կառավարման ազգային ռազմավարությունը.
7) այլ ռազմավարական փաստաթղթեր:

31. Ներկայացված բոլոր ռազմավարությունների և ծրագրերի իրականացումը, դրանցով սահմանված արդյունքների ապահովումը և գործողությունների ծրագրերով պլանավորված միջոցառումների համապարփակ իրականացումը շատ կարևոր են Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության զարգացման ռազմավարության իրագործման տեսանկյունից: Սույն ռազմավարության ներքո վերոնշյալ փաստաթղթերում ամրագրված նպատակներին և արդյունքներին ամբողջական անդրադարձ չի կատարվի:

3.5 ԱՅԼ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐ

32. Պարենային անվտանգության ռազմավարությունն իրականացնելու կարևորագույն պայմաններից է լինելու ներառականությունը: Ռազմավարությունը, որպես ընդհանուր պահանջ, հաշվի է առնելու սոցիալական ներառականության, մասնավորապես՝ խոցելի խմբերի (կանայք, անապահովներ և աղքատներ, ֆունկցիոնալության սահմանափակումներ ունեցող անձինք և այլն) ներգրավումը, ինչպես նաև բնապահպանական կայունության ապահովումը և այլն:

33. Հայաստանի Հանրապետությունում պարենային անվտանգությունը սերտորեն կապված է գյուղատնտեսության ոլորտի գործունեության հետ: Գյուղատնտեսությունը գյուղական բնակավայրերի տնտեսական գործունեության հիմնական և առաջնային աղբյուրն է: 2022 թվականի հունվարի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության գյուղական բնակչությունը կազմել է 1,069,200 մարդ, որոնց մեջ կանանց մասնաբաժինը կազմում է 51.1%: Գյուղատնտեսության ոլորտում զբաղվածությունը հիմնականում ոչ ֆորմալ բնույթ է կրում և գրեթե չի վերահսկվում պետական մարմինների կողմից: Սա հանգեցնում է բազմաթիվ խնդիրների՝ աշխատողների իրավունքների պաշտպանությունից մինչև սոցիալական ապահովության համակարգերում ներգրավվելու հնարավորությունների սահմանափակում:

34. Պարենային անվտանգության ապահովման խնդիրները հատկապես ընդգծված են խոցելի խմբերի համար: Հաճախ հանդիպում են կանանց իրավունքների սահմանափակման դեպքեր (նաև հողի և գյուղատնտեսական այլ ակտիվների անբավարար հասանելիության առումով), սահմանափակ հնարավորություններով անձանց զբաղվածության հնարավորությունները խիստ սահմանափակ են, փոքրամասնությունների նկատմամբ կարծրատիպերը դեռևս ամբողջովին հաղթահարված չեն և այլն:

35. Ներկա պահին Հայաստանի Հանրապետությունում որևէ իրավական ակտով պաշտոնապես **հաստատված չեն նվազագույն սպառողական և պարենային զամբյուղներում** ընդգրկված ապրանքների տեսականին և արժեքները: Ներկայումս Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից հաշվարկվում և հրապարակվում է նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը, որի հաշվարկման համար հիմք է ընդունվում ԱՆ կողմից մշակված սննդամթերքի կազմի, կառուցվածքի և էներգետիկ արժեքները: Անհրաժեշտ է համապատասխան իրավական ակտով սահմանել նվազագույն պարենային զամբյուղի կազմման մեթոդաբանությունը և դրանց մեծության հաշվարկման կարգը՝ ֆիզիոլոգիական նորմերին համապատասխան ըստ տարիքային խմբերի: Նվազագույն պարենային զամբյուղի արժեքը կարևոր է, քանի որ այն պետք է դրվի նվազագույն աշխատավարձի, կենսաթոշակների, կրթաթոշակների, ինչպես նաև նպաստների և սոցիալական այլ վճարների չափերի սահմանման հիմքում՝ հնարավորություն ընձեռելով հաղթահարելու պարենային անապահովությունը:

4 ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԵՆԱՍՅՈՒՆԵՐ

36. Պարենային անվտանգության ապահովման գնահատման համար օգտագործվում են պարենի (ֆիզիկական) առկայության, (տնտեսական) մատչելիության, օգտագործելիության (յուրացվելիության) և կայունության ցուցանիշները[10]:

4.1 ՊԱՐԵՆԻ (ՖԻԶԻԿԱԿԱՆ) ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆ

37. Պարենի առկայությունը բնորոշում է պարենի ֆիզիկական առկայությունը երկրում՝ անկախ այն բանից, թե դրանք ստացվել են արտադրության, պահուստների փոփոխության, արտահանման, ներմուծման, թե մարդասիրական օգնության միջոցով: Պարենի առկայության վրա ազդող հիմնական գործոններ են գները, արտադրության և առևտրի պայմանները, դրանց բարելավումն ու խթանումը, արտադրական ենթակառուցվածքներն ու բնակլիմայական պայմանները և այլն: Պարենի առկայության տեսանկյունից կարևորվում են գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի մշակության և կարևորագույն պարենային ապրանքների արտադրության ծավալների ավելացումը, առավել բարձրարժեք մշակաբույսերի մշակությունը, արտադրանքի ապրանքայնության մակարդակի բարձրացումը, արտահանման ծավալների ավելացումը, հիմնական կարևոր նշանակության և ինքնաբավության ցածր մասնաբաժնով պարենային ապրանքների անհրաժեշտ ծավալներով ներմուծման ապահովումը և այլն:

38. Հիմնական պարենային ապրանքների (ինչպիսիք են ցորենը, եգիպտացորենը, շաքարավազը, ձեթը, թռչնամիսը և հատիկաընդեղենը) կարիքը Հայաստանի Հանրապետությունում մեծ մասամբ ամբողջությամբ բավարարվում է ներմուծման միջոցով: Մի շարք կարևոր մթերքների ընդհանուր արտադրության ցուցանիշները վերջին տարիներին նվազել են: Դա հատկապես նկատելի է այնպիսի կարևոր ապրանքների համար, ինչպիսիք են՝ ցորենը, եգիպտացորենը և հատիկաընդեղենը: Այս միտումը շարունակվել է նաև 2022 թվականին՝ պայմանավորված կլիմայական պայմանների վատթարացմամբ, Հայաստանի Հանրապետության Սյունիքի, Գեղարքունիքի, Վայոց ձորի և Տավուշի մարզերում (սահմանամերձ տարածքներում պատերազմական իրավիճակի պատճառով) մշակության, անասնագլխաքանակի կորուստների և արածեցման մեծ տարածքների կորստով և սահմանափակ հասանելիությամբ:

39. Մյուս կողմից, առանձին արտադրանքների և մշակաբույսերի մասով պահպանվել են կամ որոշակիորեն աճել են արտադրության ծավալները: Այդ ապրանքներից են

[10] Committee on World Food Security (CFS) Global Strategic Framework (GSF) for Food Security & Nutrition, CFS Reform Document 2009

կարտոֆիլը, բանջարեղենը, բոստանային մշակաբույսերը, պտուղները և հատապտուղները, խաղողը, տավարի և թռչնի միսը:

Աղյուսակ 3 - Հայաստանի Հանրապետության պարենի առկայության հիմնական ցուցանիշները[11]

Պարենի մատչելիության բաղադրիչները →	**Արտադրություն, հազար տոննա**			**Ներմուծում, հազար տոննա**			**Կախվածությունը ներմուծումից**		
Պարենամթերք ↓ Տարիներ →	**2019**	**2020**	**2021**	**2019**	**2020**	**2021**	**2019**	**2020**	**2021**
Ցորեն	112.6	132.0	97.2	252.3	350.3	272.5	75.5%	75.6%	73.6%
Գարի	68.3	90.0	37.5	23.5	24.9	34.6	25.9%	25.6%	44.2%
Եգիպտացորեն	4.7	6.5	6.3	65.9	71.9	66.7	93.3%	92.0%	93.8%
Կարտոֆիլ	404.1	437.2	364.6	4.2	2.7	3.4	0.8%	0.0%	0.0%
Բանջարեղեն և բոստանային մշակաբույսեր	749.5	819.4	751.4	33.2	29.4	33.7	0.0%	0.0%	0.0%
Պտուղ և հատապտուղ	290.6	274.3	323.0	85.1	95.9	103.2	0.0%	0.0%	0.0%
Հատիկաընդեղեն	3.7	4.1	3.3	12.2	13.6	9.7	60.6%	62.7%	72.2%
Բուսական յուղ	0.4	0.3	0.2	28.1	30.6	27.2	98.4%	99.1%	99.1%
Շաքար[12]	60.0	28.8	23.3	55.8	74.0	74.8	47.4%	62.0%	63.2%
Ձու /մլն հատ/	720.6	754.6	710.4	0.2	0.1	3.0	0.0%	0.0%	0.0%
Կաթ[13]	667.9	654.4	670.7	8.3	9.4	9.5	8.4%	18.0%	16.0%
Տավարի միս	68.1	68.6	69.4	5.2	3.9	4.6	6.3%	12.7%	8.9%
Խոզի միս	16.1	15.7	15.8	8.7	5.9	9.8	26.8%	54.9%	38.8%
Ոչխարի և այծի միս	10.7	10.8	10.8	0.0	0.0	0.0	0.0%	0.0%	0.0%
Թռչնի միս	12.4	12.6	14.6	43.6	34.1	38.5	75.6%	76.1%	74.4%
Ձուկ	18.3	19.1	19.7	1.1	1.0	1.9	0.0%	0.0%	0.0%
Խաղող	217.5	283.2	237.1	3.9	2.0	0.9	0.0%	0.0%	0.0%

40. Պարենի առկայությունը նաև սահմանվում է որպես մեկ շնչի հաշվով սննդամթերքի հիմնական տեսակների փաստացի սպառման և առողջ սննդամթերքի պահանջներին համապատասխան սպառման ռացիոնալ նորմերի հարաբերություն: Պարենի ֆիզիկական առկայությունը սահմանվում է որպես բնակչության գնողունակ պահանջարկը բավարարող ծավալներով սննդամթերքի առաջարկի ապահովում:

[11] Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե

[12] Հայաստանում շաքարավազը գրեթե ամբողջությամբ արտադրվում է ներմուծված հումքի փաթեթավորման ձևով:

[13] Որպես արտադրության ծավալներ վերցված են հում կաթի ծավալները, իսկ ներմուծման և արտահանման ծավալների դեպքում՝ կաթի փոշին՝ վերահաշվարկված կաթի:

41. Ներմուծումից կախվածության մակարդակը շատ բարձր է մի քանի հիմնական պարենային ապրանքների համար: Համարյա բոլոր հիմնական պարենային ապրանքների ներմուծումը վերջին 2-3 տարիների ընթացքում կայուն աճել է (զգալի նվազել է միայն խաղողի ներմուծումը): Ներմուծման այս աճը մասամբ փոխհատուցել է տեղական արտադրության կրճատումը և մասամբ բավարարել վերջնական սպառման համար պարենային ապրանքների աճող պահանջարկը:

42. Ներմուծումից կախվածության մակարդակը վերջին շրջանում աճել է և ներկա պահին շատ բարձր է այնպիսի հիմնական պարենային ապրանքների համար, ինչպիսիք են եգիպտացորենը՝ 93.8%, շաքարավազը՝ 63.2%, բուսական յուղը՝ 99.1%, թռչնամիսը՝ 74.4%, հատիկաընդեղենը՝ 72.2% և ցորենը՝ 73.6%: Հաշվի առնելով ներկայացված տեղեկատվությունը և տարածաշրջանում առկա քաղաքական անկայունությունը և Հայաստանի Հանրապետության ներքին սոցիալ-քաղաքական իրավիճակը՝ կարելի է երկու եզրահանգում կատարել՝
    1) Հայաստանի Հանրապետությունը պարենային անվտանգության առումով լուրջ սպառնալիքների առաջ է կանգնած՝ պարենային ապրանքներից մեծ կախվածության պատճառով.
    2) տեղական արտադրության ակտիվացմանն ուղղված ջանքերը պետք է բազմապատկվեն: Հասկանալի է, որ աճի ներուժը որոշ ապրանքների համար (օրինակ՝ ցորեն, եգիպտացորեն, ձեթ և շաքարավազ) սահմանափակ է: Փոխարենը պարենային ապրանքների ներմուծման փոխարինման զգալի ներուժ կա ցորենի, գարու, հատիկաընդեղենի, կաթի, տավարի, թռչնի և խոզի մսի մասով:

43. Վերջին տարիներին պարենի համախառն առկայությունը (արտադրությունը գումարած ներմուծում հանած արտահանումը) փոփոխական է եղել: Կարևոր է, որ մեկ շնչին բաժին ընկնող համախառն առկայությունն աճել է պարենային ապրանքների մեծ մասի համար: Որոշակի նվազում է գրանցվել, սակայն մի քանի կարևոր ապրանքների՝ շաքարավազի, հատիկաընդեղենի, ցորենի, գարու, կարտոֆիլի և բանջարեղենի դեպքում:

Աղյուսակ 4 - Պարենի հասանելիությունը Հայաստանի Հանրապետությունում, 2019-2021 թթ.

Պարենամթերքի առկայության բաղադրիչները →	**Համախառն առկայություն, հազար տոննա**			**1 շնչի հաշվով համախառն առկայություն, տոննա**		
Մթերք	2019 թ.	2020 թ.	2021 թ.	2019 թ.	2020 թ.	2021 թ.
Ցորեն	459.8	486.1	366.1	0.155	0.164	0.124
Գարի	92.2	114.7	77	0.031	0.039	0.026
Եգիպտացորեն	70.5	78.3	71	0.024	0.026	0.024
Կարտոֆիլ	407.5	429.3	319.7	0.137	0.145	0.108

Բանջարեղեն և բոստանային մշակաբույսեր	727.0	795.2	595.9	0.245	0.269	0.201
Պտուղ և հատապտուղ	290.6	279.1	316.1	0.098	0.094	0.107
Հատիկաընդեղեն	9.4	10.65	8.36	0.003	0.004	0.003
Բուսական յուղ	25.2	28.7	25.28	0.008	0.010	0.009
Շաքարավազ	114.1	81.6	99.5	0.038	0.028	0.034
Ձու /մլն հատ/	714.5	752.8	701.9	0.241	0.254	0.237
Կաթ	729.0	719.5	728.9	0.246	0.243	0.246
Տավարի միս	72.7	72.5	74.6	0.025	0.024	0.025
Խոզի միս	22.0	21.6	24.9	0.007	0.007	0.008
Ոչխարի և այծի միս	9.4	10.79	10.6	0.003	0.004	0.004
Թռչնի միս	50.9	49.2	51.7	0.017	0.017	0.017
Ձուկ	15.6	15.4	12.6	0.005	0.005	0.004
Խաղող	206.4	261.2	219.8	0.070	0.088	0.074

44. 2019-2021 թվականներին մեկ շնչին ընկնող համախառն առկայության որոշակի անկում է նկատվում մի քանի ապրանքատեսակների գծով: Առավել տեսանելի նվազումը տեղի է ունեցել վերը ներկայացված նույն կարևոր պարենային ապրանքների մասով: Կարելի է ենթադրել, որ այդ փոփոխությունները պայմանավորված են եղել Հայաստանի Հանրապետությունում այդ ժամանակահատվածում տեղի ունեցող արտակարգ իրադարձություններով:

45. Նման անկումները սովորաբար փոխհատուցվում են ներքին պաշարների օգտագործմամբ և որոշ ապրանքների փոխարինմամբ: Մակրոտնտեսական մակարդակում դա կարող է և ազդում է գների փոփոխության վրա: Սպառողական գների ինդեքսն աճում է, չնայած այդ ցուցանիշի վրա ազդում են նաև այլ գործոններ, ինչպիսիք են՝ լոգիստիկ ծառայությունների թանկացումները, ներմուծվող համարժեք ապրանքների բարձր գները, պարենային ապրանքների դեֆիցիտը և այլն:

4.2 ՊԱՐԵՆԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

46. **Պարենի մատչելիությունը** բնորոշում է պարենային ապահովության և աղքատության փոխկապակցվածությունը, մասնավորապես՝ տնային տնտեսությունների և դրանց անդամների մոտ բավարար քանակությամբ ռեսուրսների (ներառյալ՝ եկամուտների) առկայությունը, օգտագործվող պարենային ապրանքների կառուցվածքի համապատասխանությունը լիարժեք սնուցման պահանջներին և այլն: Եկամուտներից զատ՝ պարենի մատչելիության վրա ազդող գործոններից են նաև տնային տնտեսությունների տեղակայվածությունը և շուկաների հասանելիությունը:

47. Պարենի մատչելիությունը սերտորեն փոխկապակցված է բնակչության եկամուտների հետ, և այդ տեսակետից պարենի մատչելիության մակարդակը կարելի է դիտարկել նաև որպես բնակչության անապահովության մակարդակի ցուցչի մաս: Աղքատ բնակչության շրջանում պարենային անապահովությունից հատկապես տուժել են գյուղական և հեռավոր վայրերում ապրող, ցածր եկամուտ ունեցող ընտանիքները: Աղքատությունն ու պարենային անապահովությունը թեև ուղղակիորեն փոխկապակցված են, սակայն պետք է նշել, որ համեմատաբար բարձր եկամուտ ունեցող անձինք ևս կարող են օգտագործել սխալ սննդակարգ: Այսինքն՝ պարենային անապահովությունը նրանց մոտ դրսևորվում է ոչ թե աղքատության, այլ անառողջ սննդակարգի պատճառով:

Աղյուսակ 5 - Պարենային անապահովության մակարդակն ըստ մարզերի, 2021 թ.

Մարզ	Բնակչություն (հազար մարդ)	Պարենային անապահովվածություն	Աղքատության մակարդակը
Տավուշ	121.5	31%	37.7%
Լոռի	213.3	29%	19.0%
Շիրակ	231.4	28%	42.9%
Գեղարքունիք	227.7	26%	48.1%
Արմավիր	263.8	22%	32.2%
Կոտայք	250.9	22%	17.4%
Արարատ	256.6	21%	32.8%
Արագածոտն	124.7	22%	32.9%
Վայոց ձոր	48.5	18%	21.9%
Սյունիք	137.3	15%	6.1%
Երևան	1,093.2	17%	19.9%
Միջինը		**21.4%**	**28.3%**

4.3 ՊԱՐԵՆԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

48. Պարենային ապրանքների հասանելիությունն ու առկայությունը բավարար չեն, մարդիկ պետք է ապահովված լինեն անվտանգ և սննդարար սննդով: Օգտագործված սնունդը պետք է ապահովի բավարար էներգիա, որպեսզի սպառողին հնարավորություն ընձեռի իրականացնել բավարար ֆիզիկական և մտավոր գործունեություն: **Պարենի օգտագործումը** (յուրացվելիությունը) բնորոշվում է կենսաբանական և սոցիալական պայմաններին համապատասխան սննդամթերքի օգտագործմամբ: Բավարար սննդակարգ ապահովելու համար անհրաժեշտ է բարձրացնել սննդակարգի ճիշտ ընտրության վերաբերյալ տեղեկացվածության մակարդակը՝ ըստ տեսականու, քանակի ու որակի սննդի ճիշտ ընտրության նպատակով:

49. Պարենի օգտագործումը ներառում է նաև այնպիսի գործոններ, ինչպիսիք են անվտանգ խմելու ջուրը և համապատասխան սանիտարահիգիենիկ պայմանները՝ հիվանդության տարածումից խուսափելու համար, ինչպես նաև պարենային ապրանքների պատրաստման և պահպանման ընթացակարգերի մասին տեղեկացվածությունը: Հետևաբար, պարենի օգտագործումը ներառում է մի շարք ասպեկտներ, որոնք կախված են սպառողի պատկերացումից, թե ինչ մթերքներ ընտրել, ինչպես պատրաստել և պահել դրանք: Անհրաժեշտ է կտրուկ բարելավել սննդամթերքի արտադրության և վաճառքի պետական վերահսկողությունը և ապահովել սննդամթերքի անվտանգության պատշաճ մակարդակ: Սննդամթերքի անվտանգության համակարգի ուժեղացումը կնպաստի սպառողների առավել պաշտպանված լինելուն:

50. Վերջին ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Հայաստանի Հանրապետությունում թերսնման և միկրոէլեմենտների անբավարարության բարձր տարածվածություն կա: Մինչև 5 տարեկան երեխաների 21%-ի դեպքում թերաճ է արձանագրվել, իսկ 17%-ն ավելորդ քաշ ունի: Երեխաների դեպքում թերաճն ակնհայտորեն կապված է տնային տնտեսությունների աղքատության և վատ սպառման, ինչպես նաև վատ խնամքի և կերակրման ու մոր ցածր կրթական մակարդակի հետ: Մյուս կողմից ավելորդ քաշի տարածվածությունը նույնն է աղքատ և հարուստ տնային տնտեսություններում, ինչը վկայում է բնակչության՝ առողջ սննդի և ապրելակերպի մասին ավելի լավ տեղեկացվածության անհրաժեշտության մասին[14]:

4.4 ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ

51. Կայունությունը պարենային անվտանգության չորրորդ հիմնասյունն է և վերաբերում է բնակչության համար ցանկացած պահի բավարար սննդամթերքի հասանելիությանը: Բնակչությունը չպետք է ենթակա լինի սննդամթերքի հասանելիության ռիսկերի՝ հանկարծակի ցնցումների (օրինակ՝ պատերազմի, տնտեսական և բնական աղետների) կամ ցիկլային կրկնվող իրադարձությունների (սեզոնային պարենային անապահովության) պատճառով: Պարենային կայունության գաղափարախոսությունը հավասարապես փոխկապակցված է ինչպես պարենի առկայության, այնպես էլ մատչելիության հիմնասյուներին:

52. Այսպիսով՝ պարենային կայունության ապահովման համար անհրաժեշտ է կենտրոնանալ պարենի առկայությունն ու մատչելիությունը վտանգող ռիսկերի կանխարգելման և վրա հասած ցնցումների ազդեցությունը մեղմելու գործիքակազմի ստեղծման և ներդրման վրա: Այս համատեքստում Հայաստանի Հանրապետության կառավարությունն արդեն իսկ կիրառել է որոշակի գործիքներ՝ կարկուտի, ցրտահարության

[14] Աղբյուրը՝ https://globalnutritionreport.org/resources/nutrition-profiles/asia/western-asia/armenia/#:~:text=Armenia's%20obesity%20prevalence%20is%20higher,women%20and%207.5%25%20for%20men.

և երաշտի հետևանքները գյուղատնտեսական ապահովագրության միջոցով փոխհատուցելու համար, ինչը թույլ է տվել որոշակիորեն մեղմել կլիմայի փոփոխության բացասական ազդեցությունը: Միևնույն ժամանակ մեծ ջանքեր է պետք ներդնել տեղական մակարդակում աղետների ռիսկի կառավարման ուղեցույցները կիրառական դարձնելու ուղղությամբ, որտեղ ներառված է նաև կլիմայի փոփոխականությանն ուղղված գործիքակազմը:

53. Այդ նպատակով կարևոր գործողություն կհանդիսանա նաև առանձին պարենային ապրանքների նյութական պահուստի տեսականու և ծավալների ընդլայնումը: Պահուստի պաշարները կարող են օգտագործվել նաև բնական աղետների և այլ ցնցումների ժամանակ գների կարգավորման և բնակչության վրա ցնցումների ազդեցությունները մեղմելու նպատակով:

54. Պարենային անվտանգության չորս հիմնասյուների կիրառությունն ընկած է **պարենապահովման համակարգային մոտեցման** հիմքում: Պարենապահովման համակարգային մոտեցումը ենթադրում է ունենալ պարենապահովման հարցերի վերաբերյալ ամբողջական և համակարգային պատկերացում, ընկալել և ներառել բոլոր բաղադրիչները, դիտարկել դրանց միջև փոխկապակցվածությունը և հաշվի առնել դրա հետևանքները: Այս մոտեցումն է դրված նաև սույն ռազմավարության մշակման և իրականացման հիմքում:

5 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ

55. Պարենային անվտանգության հիմնախնդիրները պարենային անվտանգությանը սպառնացող, վերջինիս ապահովման միջոցառումների արդյունավետության վրա բացասաբար ազդող, պարենային ապահովման իրավական, կազմակերպական և նյութատեխնիկական հիմքերը խաթարող կամ դրանց կայուն զարգացումը խոչընդոտող գործոններն ու երևույթներն են:

56. Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության հիմնախնդիրներն են՝
    1) երկրում մակրոտնտեսական և ագրո-բնապահպանական վիճակը՝ պայմանավորված տեխնոլոգիական զարգացվածության ցածր մակարդակով և բնածին ու տեխնածին աղետների զգալի դեպքերով.
    2) արտաքին սպառնալիքներին դիմագրավելու պատրաստվածության անբավարար մակարդակը.
    3) պարենային անվտանգության համակարգի թերզարգացվածությունը և հիմնական պարենային ապրանքների ինքնաբավության ցածր մակարդակը.
    4) գյուղատնտեսության անբավարար զարգացվածությունը:

57. Հիմնախնդիրների կոնկրետ դրսևորումներից են՝
    1) մակրո մակարդակում Հայաստանի Հանրապետության հիմնախնդիրները պայմանավորված են գյուղատնտեսության ոլորտում ներդրումային անբավարար գրավչությամբ և հայրենական արտադրանքի մրցունակության անբավարար մակարդակով: Ի թիվս այլ գործոնների՝ դա հետևանք է Հայաստանի Հանրապետության հայրենական արդյունաբերական համալիրում (մասնավորապես՝ սննդամթերքի արտադրության բնագավառում) տեխնոլոգիաների ընդհանուր թերզարգացվածության, բարձր և արդիական տեխնոլոգիաների խիստ անբավարար ներդրման և կիրառման: Այս անբավարարությունը ակնառու է հատկապես սննդամթերքի անվտանգության և որակի ապահովման համակարգի զարգացման ու միջազգային չափորոշիչներին համապատասխանելու ցածր մակարդակի առումով:

    Կայուն գյուղատնտեսական տնտեսավարման և բնապահպանության գործառույթների խիստ անբավարարությունը Հայաստանի Հանրապետությունում պայմանավորված է նաև ոչ բարենպաստ բնակլիմայական և երկրաբանական գործոնների (օրինակ՝ հողերի քարքարոտությունը, դեգրադացվածությունը, լանջերի դիրքադրությունը և այլն) առկայությամբ, ինչպես նաև պարենային ճգնաժամի առաջացման բարձր հավանականությամբ և դրանց դիմակայելու անբավարար ներուժով: Զուգահեռ տեղի են ունենում հողերի բերրիության կրճատում և դեգրադացված հողերի մասնաբաժնի ավելացում: Կայուն գյուղատնտեսական

տեխնոլոգիաների կիրառությունն անբավարար է, գյուղացիական տնտեսություններ և այլ տնտեսավարողների մոտ այս թեմայի վերաբերյալ գիտելիքները գրեթե բացակայում են.

2) տնտեսության իրական հատվածը և կենսապահովման բազմաթիվ կարևոր ոլորտներ զգալի կախվածության մեջ են արտաքին տնտեսական իրավիճակից: Հայաստանի Հանրապետությունում պարենային անվտանգությանը սպառնացող արտաքին գործոնները կարելի է բաժանել երկու խմբի՝ տնտեսական և անվտանգության ռիսկեր ստեղծող: Տնտեսական սպառնալիքները հիմնականում պայմանավորված են տնտեսական մրցակցության ուժեղացման միտումներով, պարենային շուկաների անկայունությամբ, տարածաշրջանային լոգիստիկ ենթակառուցվածքների հնարավոր անբարենպաստ զարգացումներով և այլն: Արտաքին լրջագույն սպառնալիքներից են նաև վերջին շրջանում տեղի ունեցող աշխարհաքաղաքական նոր զարգացումները, որոնք ստեղծում են պարենի առկայության և մատչելիության ապահովման հստակ ռիսկեր.

3) պարենային անվտանգության համակարգի զարգացումը պայմանավորված է հետևյալ երեք հիմնական բնագավառների զարգացմամբ՝

ա"բուն առաջնային գյուղատնտեսություն, որը զբաղվում է գյուղատնտեսական մթերքների արտադրությամբ, սակայն այս ենթակետը պարենային անվտանգության ռազմավարության ներքո ամբողջությամբ չի դիտարկվում, քանի որ դրանք հնարավորինս մանրամասնորեն բացահայտված և ներկայացված են ոլորտային (գյուղատնտեսության զարգացման) ռազմավարության մեջ[15]: Չնայած դրան՝ պարտադիր հիշատակման է ենթակա Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության զարգացվածության անբավարար մակարդակը, ինչը պարենային անվտանգության ապահովման լրջագույն խնդիրներից է: Այս հիմնախնդիրն ընդգրկուն է և ներառում է առաջնային գյուղատնտեսական ամբողջ արտադրությունը: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ միայն արտադրական խնդիրների հաղթահարումը բավարար չէ, քանի որ առկա է նաև հետբերքահավաքային մեծ կորուստների խնդիր, և այն միակը չէ,

բ" գյուղատնտեսական արտադրանքի մթերմամբ, վերամշակմամբ, պահպանմամբ և իրացմամբ զբաղվող բնագավառները,

գ" ենթակառուցվածքներ, որոնք ենթադրում են՝ ճանապարհատրանսպորտային, հեռահաղորդակցություն և կապ, նյութատեխնիկական մատակարարում և սպասարկում, պահպանման համակարգ և այլն:

58. Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության հիմնական խնդիրներից բխող մարտահրավերները սահմանվում են որպես ներքին և արտաքին այնպիսի գործոններ, որոնք կարող են նպաստել հիշատակված հիմնախնդիրների

[15] Տե՛ս Հավելված N 1, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 19-ի N 1886-Լ որոշման, հղում՝ https://mineconomy.am/media/10030/Razmavarutyun.pdf

առերևույթ դրսևորմանը և հետագա խորացմանը: Սույն ռազմավարական փաստաթղթի համատեքստում մարտահրավերները դասակարգված են՝ ըստ Պարենային ապահովության համաշխարհային կոմիտեի «Պարենային ապահովության և սնուցման գլոբալ ռազմավարական շրջանակը»[16] փաստաթղթով սահմանված պարենային ապահովության 4 հիմնասյուների (պարենի առկայություն, մատչելիություն, օգտագործում և կայունություն), որոնք ռազմավարության ներքո դիտարկվում են որպես ռազմավարության իրագործման նպատակներ:

59. **Պարենի առկայության** հիմնասյան ներքո Հայաստանի Հանրապետությունում սահմանվել են հետևյալ մարտահրավերները՝
   1) պարենի որոշ հիմնական տեսակներով Հայաստանի Հանրապետության ինքնաբավության ցածր մակարդակը, այդ թվում՝ բնական ռեսուրսների անկայուն և անարդյունավետ կառավարմամբ պայմանավորված.
   2) գյուղատնտեսության զարգացման անբավարար մակարդակն ու զարգացման ցածր տեմպը, գյուղատնտեսական արտադրանքի արտահանման ներուժի անբավարար օգտագործումը.
   3) պարենային արտադրանքի իրացման և արտահանման ներուժի անարդյունավետ օգտագործումը.
   4) գյուղատնտեսական (բուսաբուծություն, անասնաբուծության) ցածր արտադրողականություն՝ ներառյալ.

   ա"հողային, ջրային և այլ ռեսուրսների ոչ խնայողաբար՝ անկայուն կերպով օգտագործումը,

   բ" տեղական սերմնաբուծության զարգացվածության ցածր մակարդակը,

   գ"արդիական տեխնոլոգիաների կիրառության ցածր մակարդակը, մասնավորապես՝ ջերմատնային, գյուղատնտեսության մեքենայացման, սերմերի և պարարտանյութերի արտադրության և բազմաթիվ այլ բնագավառներում,

   դ" անասնահամաճարակային և բուսասանիտարական կայունության անբավարար վիճակը,

   ե"սպասարկման ենթակառուցվածքների անբավարարությունն ու զարգացվածության ցածր մակարդակը, մատուցվող ծառայությունների ցածր որակը,

   զ" գյուղատնտեսության զարգացման գիտակրթական ներուժի օգտագործման ցածր մակարդակը:

60. **Պարենի մատչելիության** հիմնասյան ներքո Հայաստանի Հանրապետությունում սահմանվել են հետևյալ մարտահրավերները՝
   1) պարենային ապրանքների գների շարունակական թանկացումը.
   2) ագրոպարենային համակարգի մրցունակության ցածր մակարդակը.

[16] Committee on World Food Security (CFS) Global Strategic Framework (GSF) for Food Security & Nutrition, CFS Reform Document 2009

3) բնակչության գնողունակության ցածր մակարդակը.
4) բնակչության սոցիալապես անապահով և խոցելի խմբերի անբավարար պաշտպանվածությունը:

61. **Պարենի օգտագործման** հիմնական ներքո Հայաստանի Հանրապետությունում սահմանվել են հետևյալ մարտահրավերները՝
1) պատրաստի սննդամթերքի վատնման և կորուստների մեծ մասնաբաժինը.
2) բնակչությանը լիարժեք և առողջապահական նորմերին համապատասխանող սննդով ապահովման ցածր մակարդակը, ներառյալ՝
ա"առողջ սննդի և ապրելակերպի վերաբերյալ իրազեկվածության անբավարար մակարդակը,
բ" սնուցման համար անհրաժեշտ սննդամթերքի ոչ ճիշտ բալանսավորումը.
3) սննդամթերքի որակի և անվտանգության վերահսկողության անբավարար մակարդակը:

62. **Պարենային ապահովվածության համակարգի կայունության** հիմնական ներքո Հայաստանի Հանրապետությունում սահմանվել են հետևյալ մարտահրավերները՝
1) բնական աղետները և դրանց պատճառած վնասները.
2) պարենի հիմնական տեսակներից պահպանման ենթակա պաշարների և պահուստների ձևավորման անարդյունավետ համակարգերը.
3) պաշարների կուտակման ենթակառուցվածքների անբավարարությունը.
4) ցածր ինքնաբավություն ունեցող ապրանքների ներմուծման արտաքին ռիսկերը, դրանց կառավարման համակարգի բացակայությունը.
5) ագրոպարենային արտադրանքի իրացման և արտահանման լոգիստիկ ենթակառուցվածքների անբավարարությունը.
6) արտակարգ իրավիճակներում պարենապահովման և սննդամթերքի բաշխման համակարգերի բացակայությունը.
7) պարենային ճգնաժամերի և շոկային իրավիճակների կանխատեսման, կանխարգելման և դրանց արագ արձագանքման ենթակառուցվածքների և կարողությունների անբավարարությունը.
8) պարենային անվտանգության ապահովման մշտադիտարկման և գնահատման համակարգերի անարդյունավետությունը:

5.1 ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ԵՆԹԱՆՊԱՏԱԿՆԵՐ

63. Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության ռազմավարության ընդունման և իրագործման նպատակներն են՝
1) կենսապես կարևոր պարենային ապրանքների տեղական արտադրության անհրաժեշտ մակարդակի (ինքնաբավության) ապահովումը.
2) ներմուծման հաշվին պակասորդի լրացումը.

3) նյութական պահուստում ներառված նյութական արժեքների անվանացանկերի և կանոնակարգման օրենսդրական դաշտի վերանայումը.
4) բնակչության բոլոր խավերի համար առնվազն ֆիզիոլոգիական նվազագույն նորմերին համապատասխանող սննդամթերքի ձեռքբերման տնտեսական հնարավորությունների և օգտագործվող սննդամթերքի անվտանգության ապահովումը:

5.1.1 <u>Նպատակներից բխող ենթանպատակներ</u>

64. Պարենային ապահովվածության հիմնասյուների տեսանկյունից ենթանպատակները սահմանվել են մարտահրավերներին արձագանքելու և լուծելու տրամաբանությամբ: Հայաստանի Հանրապետությունում **պարենի առկայության** ապահովման նպատակին նախատեսվում է հասնել *պարենի տեղական կայուն արտադրության, պարենի հիմնական տեսակների ձեռքբերման նպատակով համաշխարհային և ռեգիոնալ շուկաների հետ կապերի ամրապնդման, ապրանքների մատակարարման շղթաների արդյունավետության բարձրացման, ինչպես նաև պետական և մասնավոր հատվածներում պարենի պահուստների ձևավորման կարողությունների հզորացման միջոցով*: Սահմանվել են հետևյալ կոնկրետ ենթանպատակները՝
1) հողային և ջրային ռեսուրսների կառավարման, կլիմայի փոփոխության և գլոբալ տաքացման հետևանքների մեղմացման ամբողջապես վերանայված արդյունավետ համակարգ.
2) բնական ռեսուրսների կայուն կառավարման միջոցով պարենային ապրանքների ինքնաբավության մակարդակի բարձրացում.
3) պարենային արտադրանքի իրացման և արտահանման ներուժի արդյունավետ օգտագործում: Արտահանման ներուժի մակարդակի բարձրացում՝ հաշվի առնելով երկրի գյուղատնտեսական արտադրանքի, հումքի և սննդամթերքի առումով երկրի ինքնաբավության առաջնահերթությունը.
4) գյուղատնտեսության զարգացում, արտադրողականության բարձրացում և կայուն անասնահամաճարակային և բուսասանիտարական իրավիճակի ապահովում, մասնավորապես՝

ա"մշակաբույսերի սորտերի և հիբրիդների զարգացում, կենդանիների ցեղատեսակների բարելավում, արտադրողականության աճ,

բ" տեղական սերմնաբուծության և սերմնարտադրության զարգացում,

գ"արդիական տեխնոլոգիաներով ջերմատնային տնտեսությունների տարածքների ընդլայնում,

դ"գյուղատնտեսական տեխնիկայի և ագրոպարենային ոլորտի սարքավորումների արդիականացում,

ե"անասնաբուծության և թռչնաբուծության զարգացում,

զ" մատուցվող անասնաբուժական, բուսասանիտարական և այլ ծառայությունների (մասնավորապես՝ հողերի ագրոքիմիական հետազոտության) ընդլայնում և բարելավում.

5) ապրանքների ներմուծման ռիսկերի կանխատեսում և պաշարների վաղաժամ կուտակում: Ներմուծվող ապրանքների մատակարարումների խափանումների ռիսկերի նվազեցում.
6) պատրաստի սննդամթերքի կորուստների կրճատում:

65. Հայաստանի Հանրապետությունում **պարենի մատչելիության** ապահովման նպատակին նախատեսվում է հասնել *(հատկապես սոցիալապես խոցելի խմբերի շրջանում) զբաղվածության ավելացման և աղքատության նվազեցման, սոցիալական պաշտպանության և ապահովության համակարգերի ծածկույթի ընդլայնման և արդյունավետության բարձրացման, շուկաների արդյունավետության և արտաքին գործոնների նկատմամբ դիմակայության բարձրացման միջոցով*: Սահմանվել են հետևյալ կոնկրետ ենթանպատակները՝
1) սննդամթերքի գնաճի ցածր և կայուն մակարդակի ապահովում.
2) բնակչության գնողունակության մակարդակի բարձրացում (եկամուտների մակարդակի բարելավման, տեղական վերամշակող արտադրության արդյունավետ կազմակերպման, պարենային ապրանքների դիվերսիֆիկացման և դրանց մատչելիության բարձրացման միջոցով).
3) մրցունակ ագրոպարենային համակարգի կայացումն ու վերջինիս կայուն զարգացումը.
4) բնակչության սոցիալական ապահովվածության և սոցիալապես խոցելի խավերի հուսալի պաշտպանվածության ապահովումը:

66. Հայաստանի Հանրապետությունում **պարենի պատշաճ օգտագործման** ապահովման նպատակով նախատեսվում է հասնել *բնակչության սննդակարգում ավելի սննդարար մթերքների ներգրավման, հիգիենիկ պայմանների և սննդամթերքի անվտանգության ստանդարտների արդիականացման և նոր մակարդակի բարձրացնելու միջոցով*: Սահմանվել են հետևյալ կոնկրետ ենթանպատակները՝
1) բնակչությանը լիարժեք և առողջապահական նորմերին համապատասխանող սննդամթերքով ապահովում: Սննդամթերքի որակի և անվտանգության մակարդակի բարելավում.
2) սննդամթերքի անվտանգության, անասնաբուժական և բուսասանիտարական անվտանգության համակարգերի պատշաճ մակարդակի ապահովում:

67. Հայաստանի Հանրապետությունում **պարենային ապահովվածության համակարգի կայունության** ապահովման նպատակին նախատեսվում է հասնել *արտադրության և մատակարարման շղթաների զարգացման և պարենային ապահովվածության համակարգի արտաքին/տարածաշրջանային ցնցումներին (ինչպիսիք են օրինակ՝ կլիմայի փոփոխության հետևանքները, արտաքին ու ներքին շուկաների ցնցումները,*

տրանսպորտային կապերի խաթարումը, բույսերի և կենդանիների հիվանդությունների բռնկումները և այլն) դիմակայման միջոցով: Սահմանվել են հետևյալ կոնկրետ ենթանպատակները՝

1) պարենային պաշարների վաղաժամկետ կուտակում՝ օգտագործելով Հայաստանի Հանրապետության առկա ռազմավարական, քաղաքական և տնտեսական գործընկերության ողջ ներուժը.
2) պարենապահովման և սննդամթերքի բաշխման համակարգի մշակում, ներդրում և դրանց անխափան ու արդյունավետ աշխատանքի ապահովում արտակարգ իրավիճակների պայմաններում: Ներքին և արտաքին շուկաների անբարենպաստ փոփոխություններին արդյունավետորեն արձագանքելու և դիմակայելու նախադրյալների ստեղծում.
3) զարգացած լոգիստիկ ենթակառուցվածքներ և պարենային արտադրանքի իրացման աջակցության ծառայությունների մատուցում, գյուղատնտեսական արտադրանքի կորուստների կրճատում.
4) համայնքների՝ աղետներին դիմակայունության մակարդակի բարձրացում.
5) պարենային անվտանգության համակարգի մարտահրավերներին համահունչ՝ բարելավված որակավորում ունեցող կադրային ներուժի ապահովում.
6) գործող ռազմավարությունների և ծրագրերի՝ պարենային անվտանգության համակարգին առնչվող միջոցառումներով սահմանված նպատակների ապահովում.
7) մշակված և ներդրված պարենային անվտանգության ռազմավարության արդյունավետ իրագործման, հաշվետվողականության և ռիսկերի կառավարման համակարգ: Պարենային անվտանգության ներքին և արտաքին սպառնալիքների ժամանակին բացահայտում, կանխատեսում և կանխում, հետևանքների մեղմում.
8) գյուղատնտեսության ոլորտի վիճակագրության հավաքագրման համակարգի բարելավում, ներառյալ՝ մեթոդաբանության հստակեցում, տեղեկատվության ճշգրտության բարձրացում և այլն:

6 ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

68. Բնակչությանը լիարժեք և առողջապահական նորմերին համապատասխանող սննդամթերքով ապահովումը, արտակարգ իրավիճակներում պարենապահովման և սննդամթերքի բաշխման հատուկ համակարգերի անխափան և արդյունավետ աշխատանքը, պարենային անվտանգության ներքին և արտաքին սպառնալիքների ժամանակին բացահայտումը և չեզոքացումը, սննդամթերքի անվտանգության պատշաճ մակարդակի ապահովումը, գյուղատնտեսական ապրանքների ներմուծման փոխարինման ներուժի իրացումն առաջնահերթ իրականացման ենթակա բազմաթիվ նպատակներից են:

69. Վերոնշյալ նպատակներին հասնելու համար մշակվել է 2023-2026 թվականների գործողությունների ծրագիր: Այս ծրագիրը հիմնականում ուղղված է լինելու ենթանպատակներին հասնելուն, ինչը բավարար պայմաններ կստեղծի հետագա զարգացման և նպատակներին հասնելու համար: Նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է հաստատել արդյունավետ համագործակցություն շահագրգիռ բոլոր գերատեսչությունների միջև:

7 ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐԸ

70. Ռազմավարության իրագործման արդյունքները կարելի է դասակարգել եռամակարդակ համակարգով՝ կոնկրետ գործողությունների իրականացման անմիջական արդյունքներ (outputs), գործողությունների և դրանց փաթեթների իրականացման արդյունքներ՝ երկարաժամկետ կտրվածքով (outcomes), և ռազմավարության իրագործման ազդեցություն՝ երկարաժամկետ կտրվածքով (impact): Պարենային անվտանգության համակարգի զարգացման ռազմավարության և գործողությունների ծրագրի իրագործման համատեքստում ակնկալվող հիմնական անմիջական արդյունքները ներկայացված են N 2 հավելվածում:

71. **Երկարաժամկետ արդյունքները** որպես կանոն խարսխված են անմիջական արդյունքներին ամբողջապես հասնելու և դրանց վրա հետագա դրական փոփոխությունները կառուցելու վրա: Պարենային անվտանգության ռազմավարության իրագործման համատեքստում ակնկալվում են հետևյալ երկարաժամկետ արդյունքները՝
   1) Հայաստանի 2020-2050 թվականների վերափոխման ռազմավարությամբ սահմանված մինչև 2030 թվականի համար նախատեսված ռազմավարական թիրախների՝ պարենային մատչելիության, հասանելիության և ինքնաբավության մակարդակների ապահովում.
   2) գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարությամբ սահմանված մինչև 2030 թվականի համար նախատեսված ռազմավարական թիրախների ապահովում, սննդամթերքի անվտանգության կայացած և միջազգային չափանիշներով արդյունավետորեն գործող համակարգ.
   3) պարենային նվազագույն զամբյուղի գիտական հենքով սահմանումը, նվազագույն աշխատավարձի, կենսաթոշակների, կրթաթոշակների, ինչպես նաև նպաստների և սոցիալական այլ վճարների չափերի համապատասխանեցումը պարենային նվազագույն զամբյուղի արժեքին՝ հաշվի առնելով գնաճը.
   4) նյութական պահուստում ներառված նյութական արժեքների անվանացանկերի և կանոնակարգման օրենսդրական դաշտի վերանայում (բուսական յուղի, շաքարի և եգիպտացորենի (որպես անասնակեր) պարտադիր ներառմամբ): Պահուստների, պարենապահովման և սննդամթերքի բաշխման կայացած համակարգ, ներառյալ՝ ֆիզիկական ենթակառուցվածքներ, տեսականու և ծավալների հիմնավորված սահմանումը, կարգավորման, կառավարման և վերահսկողության գործող համակարգերը և այլն.
   5) պարենային անվտանգության ռազմավարության արդյունավետ իրագործման, հաշվետվողականության և ռիսկերի կառավարման համակարգի ստեղծում:

72. **Կայուն վերջնարդյունքները** (ազդեցությունը) արտահայտվում են համակարգային լուրջ փոփոխությունների և սոցիալ-տնտեսական զգալի ազդեցության բարելավումների դրսևորման միջոցով: Որպես կանոն երկարաժամկետ արդյունքների ապահովումը (համատեքստից և իրավիճակից կախված) պահանջում է 10 և ավելի տարի: Պարենային անվտանգության ռազմավարության իրագործման համատեքստում ակնկալվում են հետևյալ ազդեցությունները՝

1) բնակչության բոլոր խմբերի համար նվազագույն պարենային զամբյուղի հասանելիության ապահովում.
2) Հայաստանի 2020-2050 թվականների վերափոխման ռազմավարությամբ Global Food Security Index-ի համար նախանշված մատչելիության, հասանելիության, ինքնաբավության և բնական ռեսուրսների ու դիմակայունության ինդեքսավորված թիրախների ապահովում՝

ա" գյուղատնտեսական ապրանքների մատչելիություն (ըստ Գլոբալ պարենային անվտանգության համաթվի (Global Food Security Index) մատչելիության (Affordability) գնահատականի), 76 համաթվի ապահովում 2030 թվականին՝ բազային 64.9 համաթվի դիմաց,

բ" գյուղատնտեսական ապրանքների հասանելիություն (ըստ Գլոբալ պարենային անվտանգության համաթվի (Global Food Security Index) հասանելիության (Availability) գնահատականի), 80 համաթվի ապահովում 2030 թվականին՝ բազային 55.4 համաթվի դիմաց,

գ"կարևորագույն սննդամթերքների ինքնաբավության մակարդակ (էներգետիկ արժեքով հաշվարկված, %), 70% ինքնաբավություն՝ բազային 46.7 %-ի դիմաց,

դ"բնական ռեսուրսների և դիմադրողականության ինդեքսավորված գնահատական (ըստ Գլոբալ պարենային անվտանգության համաթվի (Global Food Security Index / Natural Resources and Resilience score - indexed)), 1.4 ցուցիչ 2030 թվականին.

3) նյութական պահուստում ներառված նյութական արժեքների վերանայված անվանացանկ և նյութական պահուստի մասին օրենքի ու պահուստի պաշարի ծավալների, դրանց ձևավորմանը, պահպանմանը և թարմացմանն ուղղված մեխանիզմներն ու ընթացակարգերը սահմանող ենթաօրենսդրական իրավական ակտերի առկայություն:

8 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

73. Պարենային անվտանգության համակարգի զարգացման ռազմավարության և 2023-2026 թվականների միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների մոտավոր գնահատականը կազմում է շուրջ 25.7 մլրդ դրամ: Միջոցառումների ֆինանսավորման զգալի մասը կամ շուրջ 22.0 մլրդ դրամն արդեն նախատեսված է կառավարության ծրագրով և դրա իրականացմանն ուղղված միջոցառումներով: Ռազմավարության շրջանակներում նախատեսված մյուս միջոցառումները նախատեսվում է իրականացնել պետական բյուջեի, միջազգային դոնոր կազմակերպությունների և մասնավոր հատվածի հաշվին: Պետական բյուջեի միջոցների հաշվին նախատեսվող միջոցառումների ֆինանսական գնահատականը կազմում է շուրջ 1.2 մլրդ դրամ, որը նախատեսվում է ապահովել համապատասխան տարվա համար ՀՀ պետական բյուջեով ՀՀ շահագրգիռ գերատեսչություններին առանձնացված հատկացումների ընդհանուր ծավալի շրջանակներում՝ ելնելով ոլորտի տվյալ տարվա առաջնահերթություններից: Ռազմավարությամբ նախանշված միջոցառումների առավել ճշգրիտ ֆինանսական գնահատականը հնարավոր է տալ կոնկրետ միջոցառումների շրջանակներում:

9 ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ

74. Պարենային անվտանգության համակարգի զարգացման ռազմավարության և գործողությունների ծրագրի իրագործումը ենթադրում է Հայաստանի Հանրապետության կառավարության, նախարարությունների և գերատեսչությունների, մարզային և համայնքային իշխանությունների ակտիվ ներգրավում տարատեսակ գործընթացներում: Ավելին՝ ռազմավարության իրագործման պատասխանատվության իրենց մասնաբաժինը պետք է ունենան ինչպես սպառողները (քանի որ ռազմավարության իրականացման գործընթացը լինելու է ներառական և սովորությունների փոփոխությանը միտված), այնպես էլ մասնավոր հատվածը և ներդրողները, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, համապատասխան պարտականություններ ստանձնած միջազգային գործընկերները, առևտրային համագործակցություն իրականացնող կազմակերպությունները:

75. Արդյունավետ կառավարման և իրագործման նպատակով ռազմավարության գործողությունների ծրագրի համակարգումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի գրասենյակի կողմից:

76. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունն իրականացնում է հետևյալ գործառույթները՝
    1) Պարենային անվտանգության համակարգի զարգացման ռազմավարության իրագործման և գործողությունների ծրագրի միջոցառումների իրականացման վերաբերյալ տարբեր պատասխանատու գերատեսչություններից և կառույցներից տեղեկատվության և հաշվետվությունների հավաքագրումն ըստ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի կողմից հաստատված ձևաչափի, դրանց վերլուծությունը և կիսամյակային պարբերականությամբ ներկայացումը Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի գրասենյակ.
    2) պարենային անվտանգության ռիսկերի վաղաժամկետ կանխատեսման, կանխարգելման և արագ արձագանքման նպատակով իրականացնել տեղեկատվության հավաքագրում, համակցված վերլուծությունների անցկացում, հաշվետվությունների պատրաստում, առաջարկությունների ներկայացում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

30.06.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2023 թվականի
հունիսի 29-ի N 1083-Լ որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր
ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2023-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

NN	Նպատակ	Միջոցառումներ	Ակնկալվող արդյունք	Կատարող	Համակատարող	Ժամկետ	Ֆինանսավորման աղբյուր և կանխատեսվող չափ
1. Պարենի առկայություն							
1	Հողային և ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման, կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողակա-նության համակարգի ներդրում	1.1 Ոռոգման ջրի ստանդարտի մշակում	Ստանդարտների ինստիտուտի տնօրենի հրամանով գործողության մեջ դրված ոռոգման ջրի ստանդարտ	Էկոնոմիկայի նախարարություն	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, Շրջակա միջավայրի նախարարություն	2023-2025 թթ., ավարտը՝ 2025 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի
		1.2 Ագրոօդերևութաբանական նշանակության տարեկան 3-4 կայանների տեղադրում հանրապետության այն կլիմայական գոտիներում, որտեղ մոնիթորինգ չի իրականացվում, և տեղակայված կայանների ցանցը համեմատաբար նոսր է	Երաշտների, խորշակների, ցրտահարությունների, ուժեղ քամիների, կարկտահարություն-ների, տեղատարափ անձրևների վերաբերյալ ստացված ավտոմատ առցանց տեղեկատվություն և իրականացված մոնիթորինգ	Շրջակա միջավայրի նախարարություն	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	2023-2025 թթ., ավարտը՝ 2025 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

		1.3 Հիդրոօդերևութաբանության և հողերի մոնիթորինգի համակարգերի արդիականացում	Կանխատեսումների արժանահավատու-թյան մակարդակն ավելացնել շուրջ 10%-ով՝ հասցնելով շուրջ 95%-ի	Շրջակա միջավայրի նախարարություն	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, Էկոնոմիկայի նախարարություն	2023-2026 թթ. ավարտը՝ 2026 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ
		1.4 Փոփոխվող բնակլիմայական պայմաններում ըստ գյուղատնտեսական գոտիների մշակաբույսերի արդյունավետ մշակության հնարավորությունների գնահատում	Ըստ գյուղատնտեսական գոտիների մշակաբույսերի արդյունավետ մշակության գնահատված հնարավորություններ՝ ելնելով փոփոխվող բնակլիմայական պայմաններից, առաջարկվող մշակաբույսերի արդյունավետ մշակության վերաբերյալ մշակված ուղեցույցներ	Էկոնոմիկայի նախարարություն	Շրջակա միջավայրի նախարարություն, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	2024-2026 թթ., ավարտը՝ 2026 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Պետական բյուջե (բնագավառի գծով համապատասխան տարվա համար նախատեսվելիք չափաքանակների շրջանակներում), օրենքով չարգելված այլ աղբյուրներ
2	Բնական ռեսուրսների կայուն կառավարման միջոցով պարենային ինքնաբավության մակարդակի բարձրացում	2.1 Արոտների օգտագործման և կառավարման պլանի մշակում 2.2 Մշակված պլանով սահմանված մեխանիզմներով արոտների օգտագործման կառավարում	Համայնքի ավագանու որոշմամբ հաստատված արոտների օգտագործման պլան՝ արոտների դեգրադացիայի կանխման և արոտների արդյունավետ օգտագործման նպատակով	Տարածքային կառավարման և ենթակառուց-վածքների նախարարություն	Շրջակա միջավայրի նախարարություն, Էկոնոմիկայի նախարարություն, Կադաստրի կոմիտե	2023-2024 թթ., ավարտը՝ 2024 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ 2025-2026թթ. (շարունակական)	Համայնքային բյուջե (բնագավառի գծով համապատասխան տարվա համար նախատեսվելիք չափաքանակների շրջանակներում), օրենքով չարգելված այլ աղբյուրներ
		2.3 Օրգանական պարարտանյութերի տեղական արտադրության զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացում	Օրգանական պարարտանյութերի արտադրության խթանման մշակված միջոցառում	Էկոնոմիկայի նախարարություն	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	2023 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Պետական բյուջե (բնագավառի գծով համապատասխան տարվա համար նախատեսվելիք

			Օրգանական պարարտանյութերի արտադրության խթանման ծրագրի շրջանակներում հիմնված արտադրական կետեր			2024-2026 թթ.	չափաքանակների շրջանակներում), օրենքով չարգելված այլ աղբյուրներ
3	Ագրոպարենային արտադրանքի իրացման և արտահանման ներուժի արդյունավետ օգտագործում	3.1 Արտադրանքի և շուկաների դիվերսիֆիկացում	Արտադրանքի և շուկաների դիվերսիֆիկացման նպատակով սննդամթերքի անվտանգության պահանջների և դրանց ապահովման նպատակով ներդրված HACCP համակարգ կամ ISO 22000 ստանդարտ Տարեկան առնվազն 2 նոր շուկաների մուտք	Էկոնոմիկայի նախարարություն		2023-2026 թթ., (շարունակական)	Մասնավոր հատված, դրամաշնորհներ, դոնոր կազմակերպություններ Շուրջ 41.0 մլն ՀՀ դրամ
		3.2 ՀՀ արտահանման ռազմավարության և կից ճանապարհային քարտեզի մշակում և իրականացում	Հայրենական արտադրողների և արտադրանքի մրցունակության բարելավված մակարդակ, արտահանման ծավալների ավելացում, թիրախային շուկաներում վերհանված խոչընդոտների վերացում	Էկոնոմիկայի նախարարություն		ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացում 2023 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	Պետական բյուջե (բնագավառի գծով համապատասխան տարվա համար նախատեսվելիք չափաքանակների շրջանակներում), օրենքով չարգելված այլ աղբյուրներ

4	Գյուղատնտեսության զարգացում, արտադրողականության բարձրացում և կայուն անասնահամաճարակային և բուսասանիտարական իրավիճակի ապահովում	4.1 Մշակաբույսերի սորտերի և հիբրիդների զարգացում, կենդանիների ցեղերի բարելավում, արտադրողականության աճ	Հացահատիկային, հատիկաընդեղեն և բանջարային սելեկցիայի իրականացված աշխատանքներ Գյուղատնտեսական մշակաբույսերի տարեկան առնվազն 5 նոր ստեղծված սորտեր և հիբրիդներ՝ բազային տարվա 2 սորտի դիմաց Տոհմային կենդանիների տեսակարար կշռի շուրջ 10 % ավելացում՝ բազային տարվա 2 %-ի դիմաց Տարեկան շուրջ 20000 արհեստական սերմնավորված գյուղատնտեսական կենդանիներ՝ բազային տարվա 13000-15000-ի դիմաց	Էկոնոմիկայի նախարարություն	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Հայաստանի ազգային ագրարային համալսարան (համաձայնությամբ)	2023-2026 թթ., (շարունակական) 2023-2026 թթ., 2024-2026 թթ.	Պետական բյուջե (բնագավառի գծով համապատասխան տարվա համար նախատեսվելիք չափաքանակների շրջանակներում), օրենքով չարգելված այլ աղբյուրներ
		4.2 Տեղական սերմնաբուծության և սերմնարտադրության զարգացման միջոցառումների իրականացում	Տեղական սերմնաբուծության և սերմնարտադրության իրականացման միջոցով գյուղատնտեսական մշակաբույսերի սերմերի և տնկանյութի առկայության ապահովում	Էկոնոմիկայի նախարարություն	Հայաստանի ազգային ագրարային համալսարան (համաձայնությամբ), Գիտական և հետազոտական կազմակերպություններ (համաձայնությամբ)	2023-2026 թթ., (շարունակական)	Պետական բյուջե (բնագավառի գծով համապատասխան տարվա համար նախատեսվելիք չափաքանակների շրջանակներում), օրենքով չարգելված այլ աղբյուրներ

			Տնկանյութի հավաստագրման ներդրված համակարգ Հյուսվածքային բազմացման (in vitro) մեթոդներով ապահովված կարտոֆիլի շրջանացված լավագույն սորտերի վիրուսազերծ տնկանյութի առկայություն		ՀԱԱՀ Ագրոկենսատեխ-նոլոգիայի ԳԿ մասնաճյուղ (համաձայնությամբ)	2023-2026 թթ., ավարտը՝ 2024 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ 2023-2026 թթ., ավարտը՝ 2026 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	
		4.3 Գյուղատնտեսական տեխնիկայի և ագրոպարենային ոլորտի սարքավորումների արդիականացում	Տարեկան շուրջ 500 միավոր գյուղատնտեսական տեխնիկայի և 250 միավոր սարքավորումների արդիականացում	Էկոնոմիկայի նախարարություն	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	2023-2026 թթ., ավարտը՝ 2026 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Պետական բյուջե (բնագավառի գծով համապատասխան տարվա համար նախատեսվելիք չափաքանակների շրջանակներում), օրենքով չարգելված այլ աղբյուրներ Տարեկան 2.5 մլրդ ՀՀ դրամ
		4.4 Անասնաբուծության և թռչնաբուծության զարգացման միջոցառումների իրականացում	Ներդրված և գործարկված գյուղատնտեսական կենդանիների համարակալման և հաշվառման համակարգ՝ երեք տարիների ընթացքում նախատեսվում է 739500 համարա-կալման միջոցառման իրականացում	Էկոնոմիկայի նախարարություն	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին,	2023-2025 թթ.,	Պետական բյուջե (բնագավառի գծով համապատասխան տարվա համար նախատեսվելիք չափաքանակների շրջանակներում), օրենքով չարգելված այլ աղբյուրներ

			Ստեղծված անասնաբուծական առնվազն մեկ խոշոր համալիր՝ ՀՀ անասնաբուծության ճյուղում իրականացվող ներդրումային ծրագրերին աջակցության տրամադրման փորձնական ծրագրի շրջանակներում (ՀՀ կառավարության 2022 թվականի մարտի 3-ի N 276-Լ որոշում) Ստեղծված թռչնաբուծական տոհմային տնտեսություն և ընդլայնված գործող թռչնաֆաբրիկաներ՝ ՀՀ անասնաբուծության ճյուղում իրականացվող ներդրումային ծրագրերին աջակցության տրամադրման փորձնական ծրագրի շրջանակներում (ՀՀ կառավարության 2022 թվականի մարտի 3-ի N 276-Լ որոշում)		Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	2023-2025 թթ. , ավարտը՝ 2025 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ 2023-2026 թթ., ավարտը՝ 2026 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	

		4.5 Բույսերի պաշտպանության միջոցառումների ծրագրի իրականացում	Բույսերի պաշտպանության իրականացված միջոցառումների հիման վրա վնասատու օրգանիզմներին հասցված վնասի կրճատված տարածման արեալ՝ տարեկան 80-90% Բույսերի պաշտպանության իրականացված միջոցառումների հիման վրա գյուղատնտեսական մշակաբույսերի բերքի կրճատված կորուստներ՝ 70-80%	Էկոնոմիկայի նախարարություն	Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	2023-2026 թթ., (շարունակական) 2023-2026 թթ., (շարունակական)	Պետական բյուջե (բնագավառի գծով համապատասխան տարվա համար նախատեսվելիք չափաքանակների շրջանակներում), օրենքով չարգելված այլ աղբյուրներ
		4.6 Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման ծրագրի իրականացում	Տարեկան շուրջ 80%-ով բարձրացված գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվություն Բարելավված գյուղատնտեսական նշանակության հողերի վիճակ՝ տարեկան 85 համայնքներին ագրոքիմիական քարտեզների տրամադրման միջոցով	Էկոնոմիկայի նախարարություն	Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	2023-2026 թթ., (շարունակական) 2023-2026 թթ., (շարունակական)	Պետական բյուջե (բնագավառի գծով համապատասխան տարվա համար նախատեսվելիք չափաքանակների շրջանակներում), օրենքով չարգելված այլ աղբյուրներ

		4.7 Մատուցվող անասնաբուժական ծառայությունների ընդլայնում, բարելավում և մարզային լաբորատորիաների վերազինում	«Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի անասնաբուժական մարզային շուրջ 30 մասնաճյուղերի նյութատեխնիկական արդիականացված բազա Բնակչության շրջանում կենդանիների վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների տարածման կանխարգելում՝ համաձայն գյուղատնտեսական կենդանիների պատվաստում ծրագրի	Էկոնոմիկայի նախարարություն	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, Հայաստանի ազգային ագրարային համալսարան (համաձայնությամբ) «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ	2023-2025 թթ., 2023-2026 թթ., (շարունակական)	Պետական բյուջե (բնագավառի գծով համապատասխան տարվա համար նախատեսվելիք չափաքանակների շրջանակներում), օրենքով չարգելված այլ աղբյուրներ
		4.8 Հողային ռեսուրսների նպատակային և ջրային ռեսուրսների խնայողական ու արդյունավետ օգտագործում	Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական նշանակության հողերի միավորման (կոնսոլիդացիայի) աջակցության 2023-2025 թվականների ծրագիրն իրականացված է Ոռոգման առաջադիմական ջրախնայող տեխնոլոգիաներով ոռոգելի հողատարածքներն ավելացված են շուրջ 3000 հա-ով	Էկոնոմիկայի նախարարություն	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, Կադաստրի կոմիտե, Շրջակա միջավայրի նախարարություն, Ջրային կոմիտե	2023-2025 թթ., ավարտը՝ 2025 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ 2023-2026 թթ.	Պետական բյուջե (բնագավառի գծով համապատասխան տարվա համար նախատեսվելիք չափաքանակների շրջանակներում), օրենքով չարգելված այլ աղբյուրներ

			Հողային բարեփոխումների փորձնական ծրագիրն իրականացված է			Ավարտը՝ 2023 թ. հուլիսի 3-րդ տասնօրյակ	
		4.9 Գյուղական համայնքների դպրոցներում գյուղատնտեսության վարման տեսական և գործնական կրթական ծրագրերի փորձնական ներդրում, դպրոցական այգիների և ջերմոցների հիմնում	ՀՀ Գեղարքունիքի մարզի 7 գյուղական համայնքների դպրոցներում հիմնված այգիներ և ջերմոցներ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	Էկոնոմիկայի նախարարություն, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	Ավարտը՝ 2023 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ
5	Ապրանքների ներմուծման ռիսկերի կանխատեսում և պաշարների վաղաժամ կուտակում: Ներմուծվող ապրանքների մատակարարում-ների խափանումների ռիսկերի նվազեցում	5.1 Ռիսկերի նվազեցմանն ուղղված գործողությունների իրականացում, ներառյալ՝ ներմուծվող ապրանքների լոգիստիկ խափանումներով պայմանավորված անբավարարության վաղաժամ կանխատեսում և կանխարգելում	Պարենային ապրանքների անխափան փոխադրության գնահատված ռիսկերի և դրանց մեղմման/նվազեցման իրականացված ուսումնասիրություններ և անհրաժեշտության դեպքում ՀՀ փոխվարչապետի գրասենյակ ներկայացված առաջարկություններ: Ձևավորված պաշարներ, մատակարարումների խափանումներով և այլ գործոններով պայմանավորված՝ պարենի անբավարարության հանգեցնող գնահատված և նվազեցված ռիսկեր	Էկոնոմիկայի նախարարություն	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, Ներքին գործերի նախարարություն, Գիտական, հետազոտական և վերլուծական կազմակերպություններ (համաձայնությամբ)	2023-2026 թթ., (շարունակական) 2023-2026 թթ., (շարունակական)	Պետական բյուջե (բնագավառի գծով համապատասխան տարվա համար նախատեսվելիք չափաքանակների շրջանակներում), օրենքով չարգելված այլ աղբյուրներ
6	Ռազմավարական գործընկեր երկրների հետ ինստիտուցիոնալ և	6.1 Մասնակցություն ռազմավարական գործընկեր երկրների նյութական պահուստների կառավարումն	Ռազմավարական գործընկեր երկրների հետ տարբեր ձևաչափերով	Ներքին գործերի նախարարություն	Էկոնոմիկայի նախարարություն,	2023-2026 թթ., ավարտը՝ 2026 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Պետական բյուջե (բնագավառի գծով համապատասխան տարվա համար

	անխափան կապերի հաստատում և ամրապնդում, արտաքին և ներքին մարտահրավեր-ներին դիմակայելու պատրաստ համալրված նյութական պահուստի ձևավորում	իրականացնող գործադիր մարմինների միջև տարբեր ձևաչափերով ընթացող ինտեգրացիոն գործընթացներին	ինտեգրված նյութական պահուստների կառավարումն իրականացնող գործադիր մարմին		Արտաքին գործերի նախարարություն		նախատեսվելիք չափաքանակների շրջանակներում), օրենքով չարգելված այլ աղբյուրներ
		6.2 Նյութական պահուստում ներառված նյութական արժեքների անվանացանկերի վերանայում՝ բուսական յուղի, շաքարի և եգիպտացորենի (որպես անասնակեր) պարտադիր ներառմամբ 6.3 Նյութական պահուստի կանոնակարգման օրենսդրական դաշտի վերանայում՝ պահուստի պաշարի ծավալների, դրանց ձևավորմանը, պահպանմանը և թարմացմանն ուղղված մեխանիզմների և ընթացակարգերի վերանայում	Վերանայված անվանացանկ Նյութական պահուստի մասին օրենքի և պահուստի պաշարի ծավալների, դրանց ձևավորմանը, պահպանմանը և թարմացմանն ուղղված մեխանիզմներն ու ընթացակարգերը սահմանող ենթաօրենսդրական իրավական ակտերի առկայություն	Ներքին գործերի նախարարություն	Էկոնոմիկայի նախարարություն, Պաշտպանության նախարարություն, Տարածքային կառավարման և ենթակառուց-վածքների նախարարություն	2023 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ 2024 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:
7	Պատրաստի սննդի կորուստների կրճատում	7.1 Ճիշտ և առողջ սնուցման, ինչպես նաև պատրաստի սննդի կորուստների իրազեկման արշավների իրականացում		Էկոնոմիկայի նախարարություն	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	2023-2026 թթ., ավարտը՝ 2026 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Պետական բյուջե (բնագավառի գծով համապատասխան տարվա համար նախատեսվելիք չափաքանակների շրջանակներում), օրենքով չարգելված այլ աղբյուրներ

		7.2 Դպրոցական սնունդ ծրագրի կրթական ենթաբաղադրիչում պատրաստի սննդի կորուստների կրճատման թեմայի ընդգրկում	Շուրջ 20%-ով կրճատված սննդի կորուստներ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն		2023-2026 թթ., ավարտը՝ 2026 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Պետական բյուջե (բնագավառի գծով համապատասխան տարվա համար նախատեսվելիք չափաքանակների շրջանակներում), օրենքով չարգելված այլ աղբյուրներ
2. Պարենի մատչելիություն							
8	Սննդամթերքի գնաճի ցածր և կայուն մակարդակի ապահովում	8.1 Գնաճի ցածր և կայուն մակարդակի ապահովում	Յուրաքանչյուր տարվա բյուջեով նախանշված գնաճի ցուցանիշների մակարդակի ապահովում	Կենտրոնական բանկ (համաձայնությամբ)	Էկոնոմիկայի նախարարություն	2023-2026 թթ., ավարտը՝ 2026 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսական ռեսուրսներ չեն պահանջվում:
9	Բնակչության գնողունակության մակարդակի բարձրացում	9.1 Նվազագույն աշխատավարձի, կենսաթոշակների, կրթաթոշակների, ինչպես նաև նպաստների և սոցիալական այլ վճարների չափերի վերանայման նպատակով ֆիզիոլոգիական նորմերին համապատասխան ըստ տարիքային խմբերի նվազագույն պարենային զամբյուղի հաշվարկում և հաստատում	Պարենային զամբյուղի հաշվարկման և ինդեքսավորման մեթոդաբանությունը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշում	Էկոնոմիկայի նախարարություն	Առողջապահության նախարարություն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, ՀՀ ԳԱԱ «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ (համաձայնությամբ)	2024-2026 թթ., ավարտը՝ 2026 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսական ռեսուրսներ չեն պահանջվում:

10	Բնակչության սոցիալական ապահովվածության և սոցիալապես խոցելի խմբերի հուսալի պաշտպանվա-ծության ապահովում	10.1 Շոկային իրավիճակներին արձագանքող սոցիալական պաշտպանության ծրագրի ներդրում (սոցիալական շտապօգնություն), ներառյալ՝ համապետական մասշտաբի սննդային քարտերի համակարգի գործարկում 10.2 Անապահովության նոր գնահատված համակարգի ներդրում 10.3 Սոցիալական առաջնային կարիքների բավարարմանն ուղղված ոչ ֆինանսական ծառայությունների տրամադրում 10.4 Սոցիալական խնդիրների լուծման նոր ձևաչափի գործարկում՝ խնդրի արձանագրումից մինչև դրա լուծումը	Ճգնաժամային իրավիճակներում խոցելի խմբերի համար պարենային ապահովվածություն Խոցելի խմբերի առաջնային կարիքների ժամանակին ու պատշաճ արձագանքում	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Էկոնոմիկայի նախարարություն, Առողջապահության նախարարություն	2025 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ 2024 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ 2023-2026 թթ., ավարտը՝ 2026 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ 2023-2026 թթ., ավարտը՝ 2026 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Պետական բյուջե (բնագավառի գծով համապատասխան տարվա համար նախատեսվելիք չափաքանակների շրջանակներում), օրենքով չարգելված այլ աղբյուրներ
3. Պարենի օգտագործում							
11	Բնակչությանը լիարժեք և առողջապահական նորմերին համապատաս-խանող սննդով ապահովում: Սննդամթերքի որակի և	11.1 Առողջ սննդակարգի վերաբերյալ ուղեցույցների մշակում և դասընթացների կազմակերպում	Դասընթացները մշակված են և կիրառվում են	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	Առողջապահության նախարարություն, Էկոնոմիկայի նախարարություն, Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին	2024 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Պետական բյուջե (բնագավառի գծով համապատասխան տարվա համար նախատեսվելիք չափաքանակների շրջանակներում), օրենքով չարգելված այլ աղբյուրներ

	անվտանգության մակարդակի բարելավում	11.2 Առողջ ապրելակերպի խթանմանն ուղղված միջոցառումների իրականացում	Առողջ ապրելակերպի և ոչ վարակիչ հիվանդությունների ռիսկի գործոնների վերաբերյալ տարեկան առնվազն 3 իրականացված միջոցառում	Առողջապահության նախարարություն	Էկոնոմիկայի նախարարություն	2023-2026 թթ., (շարունակական)	Պետական բյուջե (բնագավառի գծով համապատասխան տարվա համար նախատեսվելիք չափաքանակների շրջանակներում), օրենքով չարգելված այլ աղբյուրներ
		11.3 Կերակրի աղում յոդի պարունակության շարունակական մոնիթորինգի իրականացում	Յոդի անբավարարությամբ պայմանավորված հիվանդությունների կանխարգելում	Առողջապահության նախարարություն	Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին	2023-2026 թթ., (շարունակական)	Պետական բյուջե (բնագավառի գծով համապատասխան տարվա համար նախատեսվելիք չափաքանակների շրջանակներում), օրենքով չարգելված այլ աղբյուրներ
		11.4 Դպրոցներում սննդի և սնուցման հետ կապված միջոցառումների իրականացում	Հանրապետության 10 մարզերի հանրակրթական դպրոցի տարրական դասարանների աշակերտներն ապահովված են տաք սննդով	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն		2023-2026 թթ., (շարունակական)	Պետական բյուջե (բնագավառի գծով համապատասխան տարվա համար նախատեսվելիք չափաքանակների շրջանակներում), օրենքով չարգելված այլ աղբյուրներ Մեկ աշակերտի հաշվով օրական միջինը 171 դրամ
		11.5 Սննդամթերքում միկրոտարրերի (ֆոլաթթու և երկաթ) պարունակության գնահատում	Սննդամթերքում միկրոտարրերի (ֆոլաթթու և երկաթ) պարունակության գնահատման վերաբերյալ տեղեկատվության առկայություն	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	Առողջապահության նախարարություն, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, ՀՀ ԳԱԱ «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների	2023-2025 թթ., ավարտը՝ 2025 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Պետական բյուջե (բնագավառի գծով համապատասխան տարվա համար նախատեսվելիք չափաքանակների շրջանակներում), օրենքով չարգելված այլ աղբյուրներ Տարեկան 20 մլն դրամ

					կենտրոն» ՊՈԱԿ (համաձայնությամբ)		
		11.6 Սննդամթերքի առանձին տեսակներում վիտամիններով և միկրոտարրերով հարստացման ծրագրի մշակում 11.7 Սննդամթերքի վիտամիններով և միկրոտարրերով հարստացված ծրագրի ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացում	Առնվազն մեկ սննդամթերքի համար վիտամիններով և միկրոտարրերով հարստացված ծրագիր	Առողջապահության նախարարություն	Էկոնոմիկայի նախարարություն, Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին	Ավարտը՝ 2025 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ Ավարտը՝ 2026 թ. 2-րդ եռամսյակ	Պետական բյուջե (բնագավառի գծով համապատասխան տարվա համար նախատեսվելիք չափաքանակների շրջանակներում), օրենքով չարգելված այլ աղբյուրներ
12	Սննդամթերքի անվտանգության, անասնաբուժական և բուսասանիտա-րական անվտանգության համակարգերի պատշաճ մակարդակի ապահովում	12.1 «Գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների մասին» օրենքի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական իրավական ակտերի մշակում և հաստատում	Մշակված և հաստատված ենթաօրենսդրական իրավական ակտեր	Էկոնոմիկայի նախարարություն	Առողջապահության նախարարություն, Շրջակա միջավայրի նախարարություն, Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին	2023-2024 թթ., ավարտը՝ 2024 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Ֆինանսական ռեսուրսներ չեն պահանջվում:
		12.2 Սննդամթերքի անվտանգության ապահովման նպատակով HACCP (վտանգի վերլուծության և կրիտիկական կետերի հսկում) սննդի անվտանգության համակարգի կամ ISO 22000 ստանդարտի ներդրման աջակցության ծրագրի մշակում	Սննդամթերքի անվտանգության մակարդակի բարձրացման նպատակով մշակված պետական աջակցության ծրագիր	Էկոնոմիկայի նախարարություն	Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին	2023-2024 թթ., ավարտը՝ 2024 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Պետական բյուջե (բնագավառի գծով համապատասխան տարվա համար նախատեսվելիք չափաքանակների շրջանակներում), օրենքով չարգելված այլ աղբյուրներ
4. Պարենի ապահովվածության համակարգի կայունություն							
13	Տնտեսավարող սուբյեկտների անխափան	13.1 Ապահովագրական ամբողջական համակարգի ներդրման նպատակով հանրապետության	Գյուղացիական տնտեսություններում ընտրված բազային տարվա համեմատ	Էկոնոմիկայի նախարարություն	Կենտրոնական բանկ (համաձայնությամբ),	2023-2026 թթ., ավարտը՝ 2026 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Պետական բյուջե (բնագավառի գծով համապատասխան տարվա համար

	գործունեության ապահովում	10 մարզերում գյուղատնտեսական մշակաբույսերի ապահովագրության պիլոտային ծրագրի իրականացում	բնական աղետներից փոխհատուցված կորուստներ		Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, «Գյուղատնտեսությունն ապահովագրողների ազգային գործակալություն» ՀԿ (համաձայնությամբ)		նախատեսվելիք չափաքանակների շրջանակներում), օրենքով չարգելված այլ աղբյուրներ
14	Պարենապահով-ման և սննդամթերքի բաշխման համակարգի մշակում, ներդրում և դրանց անխափան ու արդյունավետ աշխատանքի ապահովում արտակարգ իրավիճակների պայմաններում	14.1 Արտակարգ իրավիճակների ժամանակ պարենային արագ արձագանքման և ռիսկերի կառավարման մեխանիզմների ներդրում	Պարենային արտակարգ իրավիճակի գնահատված ռիսկեր Արտակարգ իրավիճակների ժամանակ պարենային արագ արձագանքման կառավարման պլանի, պարենամթերքի բաշխման համակարգերի առկայություն Արտակարգ իրավիճակների նկատմամբ պարենային անվտանգության համակարգի դիմակայության բարձր մակարդակ	Էկոնոմիկայի նախարարություն	Ներքին գործերի Նախարարություն, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, Պաշտպանության նախարարություն, Մրցակցության պաշտպանության հանձնաժողով (համաձայնությամբ)	2023-2026 թթ., (շարունակական) Ավարտը՝ 2025 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ 2023-2026 թթ. , (շարունակական)	Ֆինանսական ռեսուրսներ չեն պահանջվում:
15	Զարգացած լոգիստիկ ենթակառուց-վածքներ և ագրոպարենային արտադրանքի իրացման աջակցության	15.1 Սպասարկման ժամանակակից ենթակառուցվածքներ, մատուցվող բարձրորակ ծառայություններ	Ստեղծված ժամանակակից լոգիստիկ կենտրոն Գյուղատնտեսական ներդրանքների մատակարարման ծառայություններ	Էկոնոմիկայի նախարարություն	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	2023-2026 թթ., ավարտը՝ 2026 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ 2023-2026թթ.	Պետական բյուջե (բնագավառի գծով համապատասխան տարվա համար նախատեսվելիք չափաքանակների շրջանակներում),

	ծառայությունների մատուցում		մատուցող 10 կազմակերպության առկայություն Տարատեսակ լոգիստիկ և շուկայավարման հիմնված կենտրոններ (hubs)՝ առնվազն 2 հատ Հիմնված կենտրոնների միջոցով փոքր գյուղացիական տնտեսությունների արտադրանքի իրացման խթանում Սառնարանային պահեստավորման և փաթեթավորման արդիական 10 նոր ենթակառուցվածքի առկայություն՝ յուրաքանչյուր մարզում 1 հատ Շուրջ 30 %-ով կրճատված Սննդի շղթայում առաջացող կորուստներ			2024-2026 թթ. 2024-2026 թթ. 2023-2026 թթ. 2024-2026 թթ. , (շարունակական)	օրենքով չարգելված այլ աղբյուրներ Յուրաքանչյուրը շուրջ 1.2 մլրդ ՀՀ դրամ Շուրջ 4.0 մլն ՀՀ դրամ
16	Պարենային անվտանգության համակարգի մարտահրավեր-ներին համահունչ բարելավված որակավորում ունեցող կադրային ներուժ	16.1 Ագրոարդյունաբերական համալիրի համար անհրաժեշտ մասնագետների պատրաստում և, կարիքի դեպքում, ուսումնական ծրագրերի պարբերաբար վերանայում՝ տեխնիկական և տեխնոլոգիական զարգացումներին համապատասխան	Տեխնոլոգիական արդի զարգացումներին համահունչ որակավորում ունեցող մասնագետների տարեկան առնվազն 5 տոկոս աճ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն, Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն (համաձայնությամբ),	2023-2026 թթ., (շարունակական)	Պետական բյուջե (բնագավառի գծով համապատասխան տարվա համար նախատեսվելիք չափաքանակների շրջանակներում), օրենքով չարգելված այլ աղբյուրներ 50 մլն դրամ (տարեկան)

					Էկոնոմիկայի նախարարություն, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, Հայաստանի ազգային ագրարային համալսարան (համաձայնությամբ)		
		16.2 Անասնաբույժ մասնագետների վերապատրաստում	Վերապատրաստված տարեկան շուրջ 10 մասնագետ	Էկոնոմիկայի նախարարություն		2023-2026 թթ., (շարունակական)	Պետական բյուջե (բնագավառի գծով համապատասխան տարվա համար նախատեսվելիք չափաքանակների շրջանակներում), օրենքով չարգելված այլ աղբյուրներ
		16.3 Դպրոցներում ագրոտեխնոլոգիական մասնագիտությունների ոլորտի նկատմամբ հետաքրքրության խթանման նպատակով հանրապետության 10 մարզերի ավագ դպրոցներում «Ագրոտեխնոլոգիա» դասընթացի ներդրում, մասնագիտական կողմնորոշման ակումբների, խմբակների ձևավորում	Դիմորդների տարեկան առնվազն 10-15 տոկոս աճ, Ագրոտեխնոլոգիական արդի զարգացումներին համահունչ ոլորտին անհրաժեշտ առնվազն 7-10 տոկոսով համալրված կադրեր «Ագրոտեխնոլոգիա» դասընթացի առկայություն Տարեկան 150-200 գյուղաբնակ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն, Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն (համաձայնությամբ), Էկոնոմիկայի նախարարություն, Տարածքային կառավարման և ենթակառուցվածք-ների նախարարություն	2023-2026 թթ., (շարունակական) 2023-2026 թթ., (շարունակական) 2023 թ.՝ առաջին պիլոտ, 2026 թ. հանրապետու-թյան մարզերում ունենալ ներդրված մոդելով	Պետական բյուջե (բնագավառի գծով համապատասխան տարվա համար նախատեսվելիք չափաքանակների շրջանակներում), օրենքով չարգելված այլ աղբյուրներ 200 մլն դրամ (տարեկան) 30 մլն դրամ (տարեկան)

			երիտասարդների մասնակցություն դասընթացներին		Հայաստանի ազգային ագրարային համալսարան (համաձայնությամբ)	առնվազն 30 ավագ դպրոց	
		16.4 Թվային տեխնոլոգիաների, արհեստական բանականության կիրառման, հիվանդությունների կառավարման ծրագրերի մշակում և ներդրում	Ագրոպարենային ոլորտում թվային տեխնոլոգիաների ու արհեստական բանականության կիրառմամբ նոր ծրագրերի առկայություն՝ ագրոտեխնոլոգիա ինկուբատոր ստարտափ գաղափարների մրցույթի հայտարարման միջոցով	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	Էկոնոմիկայի նախարարություն, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Հայաստանի ազգային ագրարային համալսարան (համաձայնությամբ)	2023-2026 թթ., ավարտը՝ 2026 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Պետական բյուջե (բնագավառի գծով համապատասխան տարվա համար նախատեսվելիք չափաքանակների շրջանակներում), օրենքով չարգելված այլ աղբյուրներ
		16.5 Թվային տեխնոլոգիաների կիրառմամբ աջակցություն գիտակրթական համակարգերի զարգացմանը և շուկայի պահանջներին համապատասխան կադրերի պատրաստում	Գիտակրթական համակարգերի բարելավման աջակցությունն իրականացվում է Խորհրդատվական և տեղեկատվական ծառայությունների մատուցման ներդրված արդյունավետ մեխանիզմներ Գյուղատնտեսության մեջ գիտության արդյունքների կիրառման ընդլայնված հնարավորություններ՝ գիտակրթական համակարգերի բարելավման	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, Հայաստանի ազգային ագրարային համալսարան (համաձայնությամբ)	2023-2026 թթ., (շարունակական) 2024-2026 թթ., (շարունակական) 2023-2026 թթ., (շարունակական)	Պետական բյուջե (բնագավառի գծով համապատասխան տարվա համար նախատեսվելիք չափաքանակների շրջանակներում), օրենքով չարգելված այլ աղբյուրներ

			միջոցառումների շրջանակներում				
17	Գյուղատնտեսության ոլորտի վիճակագրության հավաքագրման համակարգի բարելավում	17.1 Գյուղացիական տնտեսավարողների գրանցման և գյուղատնտեսական արտադրանքի հայտարարագրման օրենսդրական դաշտի մշակում, հաստատում և փուլային ներդրում	Գյուղացիական տնտեսավարողների գրանցման և արտադրանքի հայտարարագրման համակարգի ներդրման մշակված և ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացված օրենսդրական կարգավորումներ Գյուղացիական տնտեսավարողների գրանցման և արտադրանքի հայտարարագրման մշակված և ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացված գործիքակազմ Գյուղացիական տնտեսավարողների գրանցման և արտադրանքի հայտարարագրման ներդրված փուլային համակարգ	Էկոնոմիկայի նախարարություն	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, Վիճակագրական կոմիտե	2023-2024 թթ., ավարտը՝ 2024 թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ ՀՀ կառավարություն ներկայացում՝ 2024 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ Ավարտը՝ 2025 թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ ՀՀ կառավարություն ներկայացում՝ 2025 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ Ավարտը՝ 2026 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Պետական բյուջե (բնագավառի գծով համապատասխան տարվա համար նախատեսվելիք չափաքանակների շրջանակներում), օրենքով չարգելված այլ աղբյուրներ Շուրջ 45.0 մլն ՀՀ դրամ
		17.2 Գյուղացիական տնտեսավարողների գրանցման և արտադրանքի հայտարարագրման հիման վրա վիճակագրական մեթոդաբանության մշակում	Գյուղատնտեսական ռեգիստրը և վիճակագրությունը վարվում է	Վիճակագրական կոմիտե	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն, Տարածքային կառավարման և	Ավարտը՝ 2026 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Պետական բյուջե (բնագավառի գծով համապատասխան տարվա համար նախատեսվելիք չափաքանակների շրջանակներում),

					ենթակառուցվածքների նախարարություն, Էկոնոմիկայի նախարարություն		օրենքով չարգելված այլ աղբյուրներ
18	Պարենային անվտանգության ռազմավարության արդյունավետ իրագործում, հաշվետվողա-կանություն և ռիսկերի կառավարում	18.1 Պարենային անվտանգության ռազմավարության իրականացման արդյունավետ կառավարում	Ռազմավարության ընթացքի վերաբերյալ վերլուծությունների, հաշվետվությունների և պարենային անվտանգության ռիսկերի կառավարման նպատակով ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացված առաջարկություններ	Էկոնոմիկայի նախարարություն	Ներքին գործերի նախարարություն, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, Առողջապահության նախարարություն, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Մրցակցության պաշտպանության հանձնաժողով (համաձայնությամբ)	2023-2026 թթ. (յուրաքանչյուր կիսամյակի ավարտին հաջորդող ամսվա մինչև 20-ը)	Ֆինանսական ռեսուրսներ չեն պահանջվում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

30.06.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ